# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

# ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ




IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ՄՄԿ

Սույն ուղեցույցը հրատարակվել է Իտալիայի Կառավարության ֆինանսավորմամբ:

© **Հեղինակային իրավունքը պաշտպանված է**: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

*****

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

*****

**Հրատարակիչ**՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)**
**Հայաստանյան առաքելություն**
Հայաստան • Երևան 0010 • ՄԱԿ-ի գրասենյակ
• Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ
**Հեռ.**՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • **Հեռապատճեն**՝ (+374 10) 54 33 65
• **Էլ.փոստ**՝ iom@arminco.com • http://www.iom.int/armenia

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մուտք գործելու և մնալու ընդհանուր պայմանները....... 5
2. Ներգաղթ զբաղվածության նպատակով ......................... 9
3. Ներգաղթ ուսանելու նպատակով.................................. 18
4. Կացությունը ՄԹ-ում ..................................................... 30
5. Ապաստանի տրամադրման կարգը............................... 32
6. Ընտանիքների վերամիավորում .................................. 34
7. Առողջապահության համակարգը.................................. 39
8. Սոցիալական ապահովության համակարգը................. 43
9. Բնակարանային պայմանները Մեծ Բրիտանիայում ..... 47
10. Արտերկրյա որակավորումների և դիպլոմների ճանաչում ........................................................................ 49
11. Աջակցման ծառայություններ ...................................... 50
12. Բրիտանական քաղաքացիության ձեռքբերում........... 55

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
# ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

## 1. Մուտք գործելու և մնալու ընդհանուր պայմանները

<u>Մուտք գործելը</u>

Ձեր քաղաքացիությունից և Միացյալ Թագավորություն ձեր այցի նպատակից է կախված, թե անհրաժե՞շտ է արդյոք դիմել մուտքի թույլտվության համար: ՄԹ-ի մուտքի արտոնագրերի (վիզաների) ծառայություններն իրենց կայքում ունեն վիզայի վերաբերյալ հարցումների ձև, որը կարող է օգտագործվել` որոշելու, թե ձեզ հարկավո՞ր է արդյոք վիզա, կամ ի՛նչ տեսակի թույլտվություն է պահանջվում Միացյալ Թագավորություն գալու համար: http://www.ukvisas.gov.uk/en/aboutus/enquiries/contactus

<u>Ովքեր կարող են մուտք գործել</u>

Որպես այցելու Միացյալ Թագավորություն գալու համար դուք պետք է կարողանաք ապացուցել, որ.

- ցանկանում եք այցելել Միացյալ Թագավորություն միայն մինչև վեց ամսով,
- ծրագրում եք հեռանալ Միացյալ Թագավորությունից ձեր այցի վերջում,
- ունեք բավականաչափ գումար ձեր կենսապահովման և կացարանի համար` առանց աշխատելու, պետական միջոցներից տրամադրվող օգնության, կամ`
- ձեզ կօժանդակեն և կացարան կտրամադրեն ազգականները կամ ընկերները,
- մտադիր չեք հասարակության անդամներից դրամ գանձել նրանց մատուցվող ծառայությունների կամ տրամադրած ապրանքների դիմաց,
- մտադիր չեք ուսանել, և
- կարող եք հոգալ վերադարձի կամ դեպի երրորդ երկիր ուղևորության ծախսերը:

Եթե ցանկանում եք ձեր այցի ընթացքում նաև զբաղվել գործարարությամբ, ապա պետք է նաև ապացուցեք, որ դուք.

- սովորաբար բնակվում և աշխատում եք արտերկրում և չունեք Միացյալ Թագավորությունում հաստատվելու մտադրություն,
- չեք պատրաստվում աշխատել, արտադրել ապրանքներ կամ մատուցել ծառայություններ Միացյալ Թագավորությունում:

Պահանջվող փաստաթղթերը

- նամակ ձեր գործատուից՝ ձեր աշխատանքից որոշակի ժամկետով արձակուրդի տրամադրման մասին: Նամակում պետք է նաև ասվի, թե որքան ժամանակ եք աշխատում տվյալ գործատուի համար, ինչպիսի աշխատատեղ(եր)ում, և պետք է նշվի, թե երբ է ակնկալվում ձեր՝ աշխատանքի վերադառնալը:
- եթե դուք ինքնազբաղված եք, ձեր գործարար գործունեության և ֆինանսական վիճակի ապացույցներ,
- ձեր երկրում ձեզ պատկանող որևէ սեփականության ապացույց,
- եթե դուք ուսանող եք, նամակ ձեր դպրոցից կամ քոլեջից՝ նշելով, ձեր դասընթացի անվանումը, սկսվելու և ավարտվելու ամսաթվերը և արձակուրդի ժամկետի ամսաթվերը, որոնց ընթացքում նախատեսում եք այցելել Միացյալ Թագավորություն,
- կօգնի նաև, եթե կարողանաք ցույց տալ, որ ունեք ընտանիք կամ ընկերային (սոցիալական) կապեր և պարտականություններ, որոնց մոտ կամ որոնց պետք է վերադառնաք,
- ապացույցներ ձեր կազմած հաստատուն ճանապարհորդական ծրագրերի վերաբերյալ,
- բանկային քաղվածքներ նախորդ մի քանի ամիսների համար, և
- ապացույցներ ձեր տրամադրության տակ եղած խնայողությունների վերաբերյալ:

Որպես այցելու մուտք գործելու թույլտվության դիմումը կարող է ներկայացվել վիզաների ծառայություն առաջարկող ցանկացած բրիտանական դիվանագիտական հիմնարկ: Մուտքի թույլտվության բոլոր այլ դիմումները պետք է ներկայացվեն այն երկրի կամ տարածքի բրիտանական դիվանագիտական հիմնարկ, որտեղ դուք ապրում եք:

<u>ՄԹ-ում գտնվելը երկարաձգելը</u>

Եթե դուք գալիս եք Միացյալ Թագավորություն որպես այցելու, ձեզ թույլատրվում է մնալ առավելագույնը վեց ամիս: Եթե ձեզ շնորհվել է

թույլտվություն երեք ամսով մուտք գործելու համար (սա կկնքվի ձեր անձնագրում) և ցանկանում եք երկարաձգել ձեր մնալը առավելագույնը մինչև վեց ամիս, ապա պետք է դիմեք՝ օգտագործելով FLR (O) դիմումի ձևը: Դուք պետք է լրացված դիմումի ձևը ուղարկեք փոստով՝ նախքան ձեր մնալու թույլտվության ավարտը: Դիմումի ձևում տրված են մանրամասներ այն մասին, թե ուր ուղարկեք լրացված դիմումի ձևը, ինչպես նաև վարձավճարի և հիմնավորող փաստաթղթերի մասին: Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն բնօրինակները, եթե դուք չունեք հիմնավոր պատճառ, թե ինչու չեք կարող դրանք ներկայացնել ձեր դիմումի հետ միասին:

Այցելուի վիզայով դուք չեք կարող.

- ստանձնել վարձատրվող կամ չվարձատրվող աշխատանք,
- արտադրել ապրանքներ կամ մատուցել ծառայություններ ՄԹ-ում, կամ
- վաճառել ապրանքներ և ծառայություններ հասարակության անդամներին:

## Օգտակար հղումներ մուտքի և վիզայի հարցերի վերաբերյալ

**ՄԹ-ի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն**
Չենիսթոն Գարդենզ 25 ա,
Լոնդոն W 8 6TG
**United Kingdom of Great Britain and Northern Ireland**
**Embassy of the Republic of Armenia**
25A, Cheniston Gardens,
London W 8 6TG
Հեռ.՝ (44 207) 9385435
Ֆաքս՝ (44 207) 9382595
Էլ. փոստ՝ armemb@armenianembassyuk.com
consular@armenianembassyuk.com
Ինտերնետ՝ www.armenianembassy.org.uk

**ՄԹ-ի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանատուն Հայաստանի Հանրապետությունում**
Բաղրամյան պող. 34
Հեռ.՝ 264301
Էլ. փոստ՝ yerevan@fco.gov.uk

**Արտաքին գործերի և Բրիտանական Համագործակցության Գրասենյակ (FCO)**

**Հյուպատոսական ծառայություններ**

24-ժամյա շտապ հեռախոսահամար՝ 020 7008 1500

Բրիտանական դիվանագիտական հիմնարկների ցանկ. կոնտակտային տվյալներ՝

http://www.fco.gov.uk/en/about-the-fco/embassies-and-posts/

Օտարերկրյա դեսպանատներ ՄԹ-ում՝

http://www.fco.gov.uk/en/about-the-fco/what-we-do/buildingstrong-relationships-ol/foreign-embassies-in-uk/

**ՄԹ Սահմանային գործակալություն**

Տեղեկություններ վիզաների պահանջների, դիմումների և այլնի վերաբերյալ՝

http://www.ukba.homeoffice.gov.uk/visitingtheuk/Enteringtheuk/entryclearance /

Հավելված 1: Երկրների ցանկը, որոնցից պահանջվում է վիզա Միացյալ Թագավորության համար՝

http://www.ukba.homeoffice.gov.uk/policyandlaw/immigrationlaw/immigrationrules/appendix1 /

Երկրների ցանկը, որոնց համար «Տարանցում առանց վիզայի» զիջումը չի կիրառվում՝

http://www.ukba.homeoffice.gov.uk/visitingtheuk/passingthroughtheuk/documents/transitwithoutvisa/

Վիզաների մասին հարցումի ձևը՝

http://www.ukvisas.gov.uk/en/aboutus/enquiries/contactus

Եթե դուք գտնվում եք ՄԹ-ից դուրս, կապվեք ձեր մոտակա մուտքի արտոնագրի համար դիմելու կենտրոն.

Դիմումի ձևեր՝ (+44) (0) 20 7008 8308

Տեքստֆոն՝ +44 (0) 20 7008 8457

**ՄԹ-ի վիզաների ծառայություններ (UK Visa Services)**

Արտաքին գործերի և Բրիտանական Համագործակցության գրասենյակ

Քինգ Չարլզ սթրիթ

Լոնդոն, SW1A 2AH

(King Charles Street,

London, SW1A 2AH)

Հեռ.՝ 0845 010 5555

Եթե դուք գտնվում եք Միացյալ Թագավորությունից դուրս, պետք է դիմեք ձեր մոտակա բրիտանական դիվանագիտական հիմնարկ:

Տեղեկություններ վիզայի դիմորդների համար`
http://www.ukvisas.gov.uk/en/
Դիմումի ձև (VAF1). այցելուի վիզա`
http://www.ukvisas.gov.uk/resources/en/docs/1903073/vaf1
VAF1-ի համար ուղղորդման ցուցումներ`
http://www.ukvisas.gov.uk/resources/en/docs/1903073/vaf1guide

## 2. Ներգաղթ զբաղվածության նպատակով

### ա. Օտարերկրյա աշխատողների մուտքի և մնալու պայմանները

Միացյալ Թագավորությունում առկա են տարբեր աշխատանքային համակարգեր տարբեր կատեգորիաների աշխատողների համար, ովքեր ցանկանում են ձեռք բերել աշխատանքի թույլտվություն: Յուրաքանչյուր կատեգորիա ունի տարբեր պահանջներ` նպատակ ունենալով կարգավորել աշխատանքային միգրացիան և լրացնել հմտությունների պակասը ՄԹ-ում:

### 1) Աշխատանքի թույլտվություն

Միացյալ Թագավորությունը մաս է կազմում Եվրոպական տնտեսական տարածքի (ԵՏՏ): ԵՏՏ-ում գտնվող երկրների քաղաքացիները կարող են աշխատել է ՄԹ-ում և ԵՏՏ-ի ցանկացած այլ մասում առանց սահմանափակման: Այլ պետությունների քաղաքացիները ենթարկվում են ներգաղթի կանոնակարգերին, և նրանցից սովորաբար պահանջվում է աշխատանքի թույլտվություն` ՄԹ-ում զբաղվածություն ստանձնելու համար: Աշխատանքի թույլտվություններն ուժի մեջ են մինչև որոշակի ժամկետով աշխատանքի համար: Աշխատանքի թույլտվության որոշ պայմանավորվածություններ միայն կարճաժամկետ ներգաղթի կատեգորիաներ են, մինչդեռ աշխատանքի թույլտվության այլ պայմանավորվածություններ կարող են ձեզ ուղի տրամադրել դեպի Միացյալ Թագավորությունում մշտական բնակություն: Անձը պետք է նշանակված լինի որոշակի աշխատատեղում, սովորաբար լրիվ դրույքով, և կդառնա ՄԹ-ի գործատուի աշխատողը` ՄԹ աշխատանքային պայմանագրի հետ կապված բոլոր համապատասխան դրույքներով:

Միայն գործատուն կարող է դիմել աշխատանքի թույլտվության համար

Աշխատանքի թույլտվության պարտավորություններից ազատումներ
Ներգաղթի կանոնների համաձայն ԵՏՏ-ում չընդգրկված պետության քաղաքացիներից, ովքեր ցանկանում են մուտք գործել զբաղվածության նպատակով, չի պահանջվում աշխատանքի թույլտվություն, եթե նրանք պատկանում են ներգաղթի հետևյալ կատեգորիանից մեկին և, հարկ եղած դեպքում, նախապես ձեռք են բերել մուտքի թույլտվություն արտասահմանում գտնվող բրիտանական դիվանագիտական հիմնարկում.

- նրանք, ովքեր գալիս են ՄԹ՝ նոր գործ (բիզնես) հիմնելու կամ ստանձնելու կամ միանալու գոյություն ունեցող գործին որպես գործընկեր կամ տնօրեն, կամ որպես անհատ ձեռներեց (sole trader),
- աշխատող արձակուրդ անցկացնողներ, ովքեր ստանձնում են աշխատանք որպես իրենց արձակուրդի ոչ-էական մաս,
- նրանք, ովքեր գալիս են ՄԹ բարձր հմտություններ ունեցող միգրանտների ծրագրով,
- արտասահմանյան ֆիրմաների ներկայացուցիչներ, ովքեր ձգտում են ՄԹ-ում ստեղծել մասնաճյուղ կամ դուստր ձեռնարկություն,
- ուսուցիչներ և լեզվի հարցերով օգնականներ՝ հաստատված փոխանակման ծրագրերով,
- սեզոնային աշխատողներ գյուղատնտեսական ճամբարներում՝ հաստատված ծրագրերով,
- բժիշկներ և ատամնաբույժներ, ովքեր ՄԹ-ի ճանաչված բժշկական կամ ատամնաբուժական ուսումնական հաստատության շրջանավարտներ են և որոնք պատրաստվում են ձեռնարկել երկամյա նախապատրաստական ծրագիր (Foundation Programme),
- նորարարներ, ներդրողներ, օտարերկրյա տնային աշխատողներ (au pairs), տնային ծառայողներ (domestic workers), գրողներ, կոմպոզիտորներ և նկարիչներ:

Կան աշխատանքի թույլտվության վեց տարբեր տեսակներ.

1. Գործարար և առևտրային (կոմերցիոն)
Գործարար և առևտրային միջոցառումները Միացյալ Թագավորության գործատուներին թույլ են տալիս աշխատանքի վերցնել մարդկանց ԵՏՏ-

ից դուրս՝ լրացնելու թափուր տեղ, որ կարող էր այլապես լրացվել ռեզիդենտ աշխատողի կողմից:

<u>2. Ուսուցման և աշխատանքային փորձի ծրագիր (TWES)</u>
Ուսուցման և աշխատանքային փորձի ծրագրի (TWES) պայմանավորվածությունները հնարավորություն են տալիս ԵՏՏ-ից դուրս գտնվող երկրների քաղաքացիներին՝ ստանձնել աշխատանքի վրա հիմնված ուսուցում մասնագիտական կամ մասնագետի որակավորման համար, կամ ձեռք բերել աշխատանքային փորձ որոշակի ժամանակահատվածում:

<u>3. Սպորտ և զվարճանքներ</u>

<u>4. Ուսանողական պրակտիկաներ</u>

<u>5. Ընդհանուր համաձայնագրեր ծառայությունների փոխանակման վերաբերյալ (GATS)</u>
GATS պայմանավորվածությունները Եվրոպական Միությունից (ԵՄ) դուրս գտնվող ընկերությունների աշխատակիցներին թույլ են տալիս աշխատել Միացյալ Թագավորությունում ծառայությունների մատուցման պայմանագրով, որը շնորհվում է նրանց գործատուին՝ Միացյալ Թագավորությունում գտնվող որևէ կազմակերպության կողմից:

<u>6. Հատվածների վրա հիմնված ծրագիր (ՀՀԾ՝ SBS)</u>
Հատվածների վրա հիմնված ծրագիրը այս երկրի գործատուներին թույլ է տալիս հավաքագրել մարդկանց ԵՏՏ-ից դուրս՝ լրացնելու թափուր աշխատատեղերը, որ նրանք ի վիճակի չեն լրացնել ռեզիդենտ աշխատողներով: ՀՀԾ-ն հիմնված է աշխատուժի շուկայի հատուկ բաժինների (հայտնի են որպես հատվածներ) վրա:

Աշխատանքի թույլտվության դիմումներով զբաղվում է Աշխատանքի թույլտվությունների բաժինը (ՄԹ), որը մաս է կազմում Ներքին գործերի գրասենյակի ներգաղթի և քաղաքացիության տնօրինության: Աշխատանքի թույլտվությունների (ՄԹ) բաժինը սովորաբար զբաղվում է դիմումներով չորս կամ հինգ օրվա ընթացքում:

Պաշտոնի համար
1. Մանրամասն աշխատանքի բնութագիր պաշտոնի համար.

Թեկնածուի համար

1. Թեկնածուի զբաղվածության վերջին 3 տարիներն ընդգրկող՝ գործատուի մանրամասն երաշխավորագրերի օրինակներ: Այդ երաշխավորագրերը պետք է գրված լինեն ընկերության դրոշմաթղթի վրա և հաստատեն զբաղվածության սկզբի ամսաթիվը և ավարտի ամսաթիվը, պաշտոնի (աշխատատեղի) անվանումը և պարտականությունների ու պատասխանատվությունների մանրամասն բացատրությունը՝ տվյալ գործառույթի համար պահանջվող ցանկացած տեխնիկական հմտությունների հետ միասին:
2. Ցանկացած երրորդային և (կամ) մասնագիտական որակավորումներ պատճեններ:
3. Թեկնածուի ունեցած ցանկացած նախորդ աշխատանքի թույլտվության (թույլտվությունների) պատճեն:
4. Անձնագրի պատճեն:
5. Ինքնակենսագրություն (CV):
6. Թեկնածուի ստանալիք աշխատավարձի և այլ վարձատրությունների մանրամասներ:
7. Այն վայրի մանրամասները, որտեղ թեկնածուն աշխատելու է ՄԹ-ում:

Յուրաքանչյուր աշխատանքի թույլտվության ծրագրի համար կան հատուկ պահանջներ: Մանրամասն տեղեկությունների համար պետք է կարդաք համապատասխան ուղղորդող գրառումները:
http://www.ukba.homeoffice.gov.uk/workingintheuk/workpermits/

## 2) Միավորների վրա հիմնված համակարգ: 1-ին մակարդակ. բարձր հմտություններ ունեցող միգրանտների ծրագիր (HSMP)

Միավորների վրա հիմնված և մակարդակների բաժանված ներգաղթի համակարգ

ՄԹ-ում աշխատանքային միգրացիայի կարգավորումը կառավարվում է միավորների վրա հիմնված և մակարդակների բաժանված ներգաղթի համակարգի շրջանակներում, այդ թվում՝ 2008 թ. շրջանառության մեջ դրված ներգաղթի համակարգը ԵՄ անդամ չհանդիսացող պետությունների քաղաքացիների համար, ովքեր ցանկանում են աշխատել, ուսանել կամ վերապատրաստվել ՄԹ-ում:

Համակարգը բաժանված կլինի հինգ մակարդակների, որոնք կընդգրկեն բարձր հմտություններ ունեցող անձանց միգրացիան, աշխատանքի թույլտվությունները, ուսանողներին, աշխատող արձակուրդավորներին և զբաղվածության, ուսման, բիզնեսի կամ ներդրումների հետ կապված գրեթե բոլոր մյուս ուղիները:
Ներգաղթի նոր համակարգը կփոխարինի ներկայումս գոյություն ունեցող մոտավորապես 80 ուղիներին: Յուրաքանչյուր մակարդակ կունենա տարբեր պայմաններ, իրավասություններ և մուտքի պահանջներ միգրանտների համար, ովքեր ցանկանում են աշխատել ՄԹ-ում:

Համակարգը ներդրվում է փուլային սկզբունքով: Վերջերս Միացյալ Թագավորությունը հրապարակեց տեղեկություններ առաջին մակարդակի մասին, որը պետք է ներդրվի 2008 թվականի սկզբին: 1-ին մակարդակը, որը վերաբերվում է բարձր հմտություններ ունեցող միգրանտներին, կբաժանվի չորս ենթակատեգորիաների, այդ թվում՝ ընդհանուր բարձր հմտություններ ունեցող միգրանտներ, ձեռներեցներ, ներդրողներ և ՄԹ-ի կրթական հաստատությունների օտարերկրյա բուհական ուսանողներ:

<u>Միավորների կառուցվածքը</u>
Յուրաքանչյուր մակարդակ միգրանտից կպահանջի ունենալ բավարար միավորներ՝ մուտքի թույլտվություն կամ Միացյալ Թագավորությունում մնալու (մշտական բնակության) թույլտվություն ձեռք բերելու համար: Միավորները կշնորհվեն յուրաքանչյուր մակարդակի համար սահմանված տարբեր չափանիշների համար: 1-ին և 2-րդ մակարդակներում միավորներ կտրամադրվեն այնպիսի չափանիշների համար, ինչպիսիք են՝ տարիքը, նախորդ աշխատավարձը կամ հեռանկարային աշխատավարձը, և որակավորումները: Այս համակարգը նման է ներկայիս Բարձր հմտություններ ունեցող միգրանտների ծրագրին (HSMP), որը գործնականում ապացուցել է իր հաջողվածությունը:

1-ին մակարդակը (ընդհանուր)՝ «բարձր հմտություններ ունեցող աշխատող», նախատեսված է թույլ տալու բարձր հմտություններ ունեցող մարդկանց գալ Միացյալ Թագավորություն՝ աշխատանք կամ ինքնազբաղվածության հնարավորություններ փնտրելու: Ի տարբերություն մեր աշխատանքի թույլտվությունների կամ գործարար մարդկանց ծրագրերի, դուք կարիք չունեք աշխատանքի առաջարկի կամ մանրամասն գործարար ծրագրի (բիզնես պլան)՝ 1-ին մակարդակի (ընդհանուր)՝ («բարձր հմտություններ ունեցող աշխատող») համար դիմելիս: Երբ դիմում եք, ձեզ շնորհվում են միավորներ՝ ելնելով ձեր որակավորումներից, նախորդ վաստակներից, Միացյալ Թագավորության

փորձից, տարիքից, անգլերեն լեզվի իմացությունից և ձեր ունեցած կենսապահովման միջոցներից:

ՄԹ-ն կսկսի ընդունել 1-ին մակարդակի (ընդհանուր) համար դիմումներ այլ երկրներում, բացի Հնդկաստանից, 2008 թ.-ից: Մինչ այդ, եթե դուք գտնվում եք Միացյալ Թագավորությունից դուրս՝ Հնդկաստանից բացի այլ երկրում, կարող եք շարունակել դիմել «Բարձր հմտություններ ունեցող միգրանտների ծրագրի» շրջանակներում. http://www.ukba.homeoffice.gov.uk/workingintheuk/hsmp/

## (3) Միջազգային շրջանավարտների ծրագիր

Միջազգային շրջանավարտների սխեման մեկնարկել է 2007 թ. մայիսի 1-ին և փոխարինում է Գիտության և ճարտարագիտության ոլորտների բուհական սխեմային: Եթե դուք Եվրոպական տնտեսական տարածքի (ԵՏՏ) մեջ չընդգրկված երկրի շրջանավարտ եք և ավարտել եք ձեր ուսումը Միացյալ Թագավորությունում, այս սխեման ձեզ թույլ է տալիս ունենալ աշխատանք կամ ինքնազբաղվածություն Միացյալ Թագավորությունում: Ձեզ թույլատրվում է մինչև 12 ամիս մնալ Միացյալ Թագավորությունում՝ աշխատանքի փորձ ձեռք բերելու նպատակով: Եթե ցանկանում եք մնալ Միացյալ Թագավորությունում այս ժամկետը լրանալուց հետո, ապա պետք է դիմեք ներգաղթի նոր կատեգորիայի շրջանակներում.
http://www.ukba.homeoffice.gov.uk/workingintheuk/igs/

## (4) Կլինիկական փորձ ձեռք բերող բժիշկների կամ ատամնաբուժական դիտորդների ծրագիր

http://www.ukba.homeoffice.gov.uk/workingintheuk/clinicalattachments/

## (5) Թարմ տաղանդների Շոտլանդիայի ծրագիր

Շոտլանդիայի ծրագրի շրջանակներում աշխատելը Շոտլանդիայի կառավարության թարմ տաղանդների նախաձեռնության մասն է: Նախաձեռնությունը Միացյալ Թագավորությունից դուրս գտնվող անձանց խրախուսում է գալ ապրելու և աշխատելու Շոտլանդիայում, ինչպես նաև խրախուսում է նրանց, ովքեր ծնվել են Շոտլանդիայում, մնալ սկսելու կամ շարունակելու իրենց կարիերան այնտեղ: Չկան սահմանափակումներ աշխատանքի տեսակների նկատմամբ, որ դուք

կարող եք կատարել, եթե ձեզ տրվել է թույլտվություն մնալու Շոտլանդիայում այս ծրագրի շրջանակներում:
http://www.ukba.homeoffice.gov.uk/workingintheuk/freshtalent/

## (6) Արտերկրյա որակավորված բուժքույրեր և մանկաբարձուհիներ

Եթե դուք գալիս եք Միացյալ Թագավորություն որպես արտերկրյա որակավորված բուժքույր, ձեզ կտրվի թույլտվություն մուտք գործելու և մնալու Միացյալ Թագավորությունում առավելագույնը 18 ամիս: 18 ամիսը լրանալուց հետո ձեզանից կակնկալվի հեռանալ Միացյալ Թագավորությունից.
http://www.ukba.homeoffice.gov.uk/workingintheuk/overseasqualifiednurses/

## (7) Տնային աշխատողների (au pairs) ծրագիր

Տնային աշխատողների (au pairs) ծրագրի նպատակն է՝ որոշակի երկրների երիտասարդներին հնարավորություն տալ կարճ ժամանակով գալու Միացյալ Թագավորություն՝ աշխատելու անգլիախոս ընտանիքի համար: Դուք պետք է ձեր անգլիախոս ընտանիքի համար աշխատեք օրական մինչև հինգ ժամ: Նրանք կտրամադրեն առանձին սենյակ և շաբաթական նպաստ:
Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝

- Տնային աշխատողների միջազգային ընկերակցություն (The International Au Pair Association) - www.iapa.org
- Տնային աշխատողների բրիտանական գործակալությունների ընկերակցություն (The British Au Pair Agencies Association) - www.bapaa.org.uk
- Սահմանային գործակալության կայքէջ http://www.bia.homeoffice.gov.uk/workingintheuk/aupairs/whattoexpect/

## (8) Զվարճանքների ոլորտի աշխատողներ

http://www.ukba.homeoffice.gov.uk/workingintheuk/entertainers/

## (9) Հետբուհական բժիշկներ և ատամնաբույժներ

http://www.ukba.homeoffice.gov.uk/workingintheuk/postgraduatedoctorsanddentist/

Բոլոր կատեգորիաների սպառիչ ցանկի համար տես՝
http://www.ukba.homeoffice.gov.uk/workingintheuk/

## բ. Աշխատանքի շուկայի հատվածներ և աշխատուժի պակաս

Երկրի աշխատուժի շուկայում կա համապատասխան որակավորում և հմտություններ ունեցող աշխատողների պակաս, ուստիև գործատուները կարող են դիմել աշխատանքի թույլտվության համար՝ անհրաժեշտություն չունենալով նախ ապացուցելու, որ չեն կարող լրացնել թափուր աշխատատեղը ռեզիդենտ աշխատուժի շուկայում:

- Հմտությունների պակաս ավելի հաճախ զգացվում է հետևյալ աշխատատեղերում. փորձառու թափոնների մենեջերներ, լոգիստիկայի մենեջերներ / երթևեկության կարգավարներ, իրացման ոլորտի աշխատակիցներ, մեխանիկ-փականագործներ (մեքենաների և գործարանային), վարորդներ (հավաքման և մասնագիտացված տրանսպորտային միջոցների), տեսակավորողներ (թափոնների վերամշակման համար), գիտնականներ և ճարտարագետներ, շինարարության ոլորտ, գիտության և տեխնոլոգիայի (ասոցիացված) մասնագետներ, դասավանդող և հետազոտող մասնագետներ, գործարարության և հանրային ծառայությունների մասնագետներ, առողջապահության և սոցիալական ապահովության ասոցիացված մասնագետներ, առողջապահության ոլորտի մասնագետներ:
- Աշխատուժի պակաս է զգացվում նաև ցածր հմտություններ պահանջող մասնագիտացումներում և ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսության ոլորտը, ծառայությունների ոլորտի մասնագիտացումները, շինարարության և առողջապահության ոլորտները, տարրական արհեստների, գործարանային և պահեստավորման հարակից մասնագիտացումներ:

## գ. Աշխատանքի որոնման տեղեկություններ և կայքեր

**Աշխատանքի և թոշակների նախարարություն**
**(Department for Work and Pension)**
http://www.dwp.gov.uk/
Տեղեկություններ զբաղվածության խնդիրների, հարկերի, ազգային ապահովագրական համարների, աշխատանքի շուկայի վիճակի և այլնի վերաբերյալ:

**Jobseeker Direct**
Հեռախոս՝ 0845 60 60 234
Աշխատանքի նոր թափուր աշխատատեղեր և օգնություն աշխատանք գտնելու հարցում:

**Jobcentre Plus**
http://www.jobcentreplus.gov.uk/JCP/Aboutus/Ouroffices/index.html
Jobcentre Plus-ի քարտուղարություն: Մակարդակ 1-ին
Սթիլ սիթի հաուս
Ուեսթ սթրիթ
Շեֆիլդ, S1 2GQ
(Steel City House
West Street
Sheffield, S1 2GQ)

Մասնագիտական, ժամանակակից և անվճար ծառայություններ ողջ Բրիտանիայում տեղաբաշխված գրասենյակների և կոնտակտային կենտրոնների ցանցի միջոցով:

**Գործարարության, ձեռներեցության և կարգավորիչ բարեփոխումների նախարարություն**
**(Department for Business, Enterprise and Regulatory Reform)**
http://www.berr.gov.uk/
Տեղեկություններ ՄԹ-ում գործարարության հնարավորությունների մասին:

**Directgov**
http://www.direct.gov.uk/en/Employment/Jobseekers/LookingForWork/DG_10030134
Աշխատանքի որոնման տվյալների շտեմարան:

**Աշխատանքի դարպասներ**
**(Work Gateways)**
http://www.workgateways.com/search.php
Տեղեկատվություն ՄԹ-ում աշխատելու մասին: Աշխատանքի որոնման տվյալների շտեմարան:

**Եվրոպական հետազոտողների (գիտաշխատողների) շարժունակության պորտալ**
**(European Researcher´s Mobility Portal)**
http://www.ec.europa.eu/eracareers/index_en.cfm

Թափուր աշխատատեղեր՝ խմբավորված ըստ երկրների կամ հետազոտության բնագավառի:

**Աշխատանքի որոնման կայքեր**
http://www.jobsite.co.uk/
http://www.jobsearch.co.uk/
http://www.clickajob.co.uk/
http://www.newjobdirect.co.uk/
http://jobsearch.monster.co.uk/
http://www.jobs1.co.uk/
http://www.jobisjob.co.uk/
Աշխատատեղերի տվյալների շտեմարանը կազմված է ըստ կատեգորիաների և աշխատատեղերի տեսակների:

**Լրագրեր**
«Գարդիան ջոբզ» (Guardian Jobs). http://www.jobs.guardian.co.uk/
«Դեյլի նյուզփեյփըր» (Daily newspaper). http://dailynewspaper.co.uk/
«Միրրոր» (The Mirror). http://www.mirror.co.uk/
«Սան» (The Sun). http://www.thesun-uk.com/
«Իքոնոմիսթ» (The Economist). http://www.economist.co.uk/
«Սանդի թայմզ» (Sunday Times). http://www.timesonline.co.uk/tol/news/
«Սանդի միրրոր» (Sunday Mirror). http://www.sundaymirror.co.uk

## 3. Ներգաղթ ուսանելու նպատակով

### ա. Ուսանողների համար մուտքի և մնալու պայմանները

**ՎԻԶԱ**
Եթե գալիս եք ուսանելու առավելագույնը 6 ամսով, կարող եք գալ ՄԹ՝ որպես «այցելող ուսանող» կամ «ուսանող»: Եթե նախընտրում եք գալ որպես «այցելող ուսանող», ապա.

- Ձեզ չի թույլատրվի կատարել որևէ աշխատանք (եթե նույնիսկ դա լինի դասընթացի մի մասը),
- Եթե ձեր դասընթացները երկարաձգվեն, ձեզ չի թույլատրվի դիմել ՄԹ-ում ավելի երկար մնալու համար:

Եթե ցանկանում եք գալ ՄԹ որպես «ուսանող» ավելի քան վեց ամսով, պետք է «մուտքի թույլտվության» համար դիմեք ձեր երկրի

բրիտանական առաքելություն (դեսպանատուն, գերագույն հանձնաժողով կամ գլխավոր հյուպատոսություն) նախքան ՄԹ գալը:

## Ուսանողներին ներկայացվող պահանջներ

ԵՏՏ-ի մեջ չընդգրկված երկրների քաղաքացիներին անհրաժեշտ է թույլտվություն մուտք գործելու համար: Համաձայն ՄԹ-ի միգրացիոն համակարգի, այս թույլտվությունը կոչվում է «մուտքի թույլտվություն»: Որպես ուսանող ՄԹ մուտք գործելու թույլտվություն հայցող անձը պետք է բավարարի հետևյալ պահանջները.

1. արդեն ընդունվել է որևէ ուսումնական դասընթաց, որը տրամադրվում է ՄԹ-ի Կրթության և հմտությունների գերատեսչության՝ կրթություն և ուսուցում իրականացնողների ռեգիստրում ընդգրկված որևէ կազմակերպության կողմից,
2. արդեն ընդունվել է որևէ ուսումնական դասընթաց՝
    - պետական ֆինանսավորմամբ հետագա կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում (համալսարան)՝ գրանցման և հաճախումների պահպանված հաշվառումներով, որոնք մատչելի են ՄԹ-ի Սահմանային գործակալությանը,
    - իրական մասնավոր ուսումնական հաստատությունում, կամ
    - անկախ վճարովի դպրոց:
3. կարող է և մտադիր է հաճախել հետևյալ դասընթացներից որևէ մեկը.
    - աստիճան շնորհող ճանաչված լիաժամկետ դասընթաց պետական ֆինանսավորմամբ հետագա կամ բարձրագույն կրթության հաստատությունում,
    - աշխատանքային օրերի լիաժամկետ դասընթաց, որը ներառում է հաճախումներ շաբաթական առնվազն 15 ժամ կազմակերպված ցերեկային պարապմունքների միևնույն հաստատությունում մեկ առարկայի կամ ուղղակիորեն առնչվող առարկաների գծով, կամ
    - լիաժամկետ դասընթաց անկախ վճարովի ուսումնական հաստատությունում:
4. եթե 16 տարին չի լրացել, ընդգրկված է անկախ վճարովի ուսումնական հաստատությունում՝ լիաժամկետ դասընթացում, որը համապատասխանում է 1944թ. Կրթության ակտի պահանջներին, և

5. մտադիր է հեռանալ Միացյալ Թագավորությունից ուսման ավարտին (բացառությամբ աստիճան շնորհող դասընթացների ուսանողների, ովքեր ուսումն ավարտելուց հետո հույս ունեն մնալ աշխատելու՝ պայմանով, որ նրանք չեն հովանավորվում են իրենց կառավարության կամ միջազգային կրթաթոշակային գործակալության կողմից), և
6. մտադիր չէ զբաղվել գործարարությամբ կամ ստանձնել զբաղվածություն ՄԹ-ում, բացառությամբ կես դրույքով կամ արձակուրդի ժամանակ աշխատանքի՝ Զբաղվածության հարցերով պետքարտուղարի համաձայնությամբ,
7. կարող է հոգալ իր դասընթացի և կացարանի ծախքերը, ինչպես նաև իր և իր խնամքի տակ գտնվող անձանց կենսապահովումը՝ առանց աշխատելու կամ գործարարությամբ զբաղվելու կամ պետական միջոցներից օգնություն խնդրելու:

## «Ուսանող այցելուներին» ներկայացվող պահանջները

Եթե դուք գալիս եք Միացյալ Թագավորություն որպես այցելու՝ ուսանելու նպատակով, դուք պետք է՝

- անկեղծորեն ձգտեք մուտք գործել որպես ուսանող այցելու սահմանափակ ժամկետով, ինչպես հայտարարել եք ինքներդ, և ոչ ավելի, քան վեց ամսով,
- պետք է ընդունված լինեք որևէ ուսումնական դասընթաց, որը պետք է տրամադրվի Երեխաների, ուսումնական հաստատությունների և ընտանիքների գերատեսչության՝ կրթություն և ուսուցում իրականացնողների ռեգիստրում ընդգրկված որևէ կազմակերպության կողմից,
- հեռանաք Միացյալ Թագավորությունից ձեր այցի ավարտին, ինչպես հայտարարել եք ինքներդ,
- ապահովեք ձեր և ձեր խնամքի տակ գտնվող ցանկացած անձանց ապրելու և կացարանի ծախքերը՝ առանց պետական միջոցներից օգնություն ստանալու,
- ապահովեք, որ ձեր և ձեր խնամքի տակ գտնվող անձանց կենսապահովումը և կացարանը կհոգան ազգականները կամ ընկերները, և դուք և նրանք աշխատանք չեք ստանձնի, և
- կարողանաք փակել վերադարձի կամ դեպի երրորդ երկիր ճամփորդության ծախքերը:

Դուք չպետք է.

- աշխատանք ստանձնեք Միացյալ Թագավորությունում,
- զբաղվեք բիզնեսով, արտադրեք ապրանքներ կամ մատուցեք ծառայություններ Միացյալ Թագավորությունում, այդ թվում՝ ապրանքների և ծառայությունների անմիջական վաճառքը հասարակության անդամներին,
- սովորեք կառավարության կողմից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունում,
- լինեք մինչև 18 տարեկան երեխա,
- ստանձնեք կես դրույքով (մինչև 20 ժամ) կամ արձակուրդի ժամանակ լրիվ դրույքով զբաղվածություն. չպետք է փորձ ձեռք բերելու նպատակով տեղավորվեք աշխատանքի կամ պրակտիկայի (վարձատրվող կամ չվարձատրվող) որպես ձեր դասընթացի մաս, կամ
- երկարաձգեք ձեր գտնվելը Միացյալ Թագավորությունում:

Եթե ՄԹ մուտք գործելու համար դուք անպայման պետք է ունենաք վիզա (պատկանում եք visa national կատեգորիային), դիմեք մուտքի թույլտվության համար, որպես ուսանող, ոչ թե որպես այցելու: Որպես visa national մուտք գործած այցելուներին չի թույլատրվում այցն ավարտվելուց հետո երկարաձգել իրենց մնալը որպես ուսանողներ, ուստի առաջին հերթին համոզվեք, որ դիմում եք ճիշտ տեսակի մուտքի թույլտվության համար:

Դուք պետք է համոզվեք, որ ունեք հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները՝ նախքան կդիմեք արտերկրում գտնվող բրիտանական առաքելություն՝ ՄԹ մուտքի թույլտվության կամ ճամփորդության համար:

- դիմումի ձևեր (Ձև VAF1) վիզայի կամ մուտքի թույլտվության համար,
- ձեր անձնագիրը,
- ձեր՝ վերջերս արված անձնագրի չափի լուսանկար,
- տեղական արժույթով վճարված համապատասխան վճարը,
- փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ դուք բավարարում եք մուտքի պահանջները,
- դասընթացում ընդունված լինելու մասին նամակ (բացառությամբ հեռանկարային ուսանողներից):

Նամակում պետք է նշված լինեն դասընթացի անվանումը, տևողությունը (սկզբի և ավարտի ամսաթվերը), նամակը պետք է հաստատի, որ դուք բավարարել եք դասընթացի ընդունելության պահանջները ճանաչվել եք ակադեմիապես ունակ՝ դասընթացն անցնելու համար:

- Ապացույցներ, որ դուք կարող եք վճարել դասընթացի վարձը և պահել ձեզ և ձեր ընտանիքը (եթե կիրառելի է),
- Դա կարող է ներառել կառավարության հովանավորության ապացույց, նամակ հովանավորից, որը հաստատում է, որ նա կարող է աջակցել ձեզ, ինչպես նաև ապացույց, որ նա կարող է դա անել, և (կամ) ձեր բանկային քաղվածքները: Ստուգեք ձեր տեղական բրիտանական առաքելությունում, թե քանի բանկային քաղվածք են պահանջում:
- Կացարանի ապահովման ապացույց:

Թեև ներգաղթի կանոնները չուղեկցվող (առանց խնամքի տակ գտնվող անձանց) ուսանողներից չեն պահանջում ցույց տալ, որ կացարանի մասին արդեն պայմանավորվել են, ձեր ուսումնական հաստատությունը կարող է ձեզ տեղեկություններ տրամադրած լինել դրա առկայության մասին կամ կարող է ձեզ համար կացարան ապահովել:

Ձեր մուտքի թույլտվությունը, կամ կնիքը, որ ձեր անձնագրում դնում է ներգաղթի պաշտոնյան, երբ դուք ժամանում եք ՄԹ, կմատնանշեն, թե դուք պե՞տք է արդյոք գրանցվեք ոստիկանությունում: Եվրոպական տնտեսական տարածքի երկրների և Շվեյցարիայի քաղաքացիները և Բրիտանական Համագործակցության երկրների քաղաքացիները պարտավոր չեն գրանցվել: Ձեր մուտքի թույլտվությունը կամ կնիքը հավանաբար կհանձնարարեն ձեզ՝ գրանցվել ոստիկանությունում, եթե.

1. 16 կամ ավելի տարեկան եք,
2. նախատեսում եք մնալ Միացյալ Թագավորությունում ավելի քան վեց ամիս որպես ուսանող:

Եթե ձեր մուտքի թույլտվությունը կամ կնիքը հանձնարարում են ձեզ գրանցվել, ապա ձեր ամուսինն, քաղաքացիական զուգընկերոջը կամ երեխային հավանաբար կտրվի մուտքի թույլտվություն կամ կնիք, որը նրանց ևս կհանձնարարի գրանցվել:

## ՈՒՍՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ

Ստուգելու համար, թե ինչպես են ձեր սեփական որակավորումները համեմատվում բրիտանական որակավորումների հետ, կապվեք տեղական Բրիտանական Խորհրդի գրասենյակի հետ կամ գրեք ՄԹ-ի Ակադեմիական ճանաչման ազգային տեղեկատվական կենտրոն (ԱՃԱՏԿ՝ NARIC): Յուրաքանչյուր քոլեջ և համալսարան ինքն է որոշում, թե ինչպիսի միջազգային որակավորումներ ընդունի, սակայն Բրիտանական Խորհրդի կամ ԱՃԱՏԿ-ի միջոցով ստուգելը ձեզ կարող է տալ ընդհանուր պատկերացում, թե ինչ ակնկալել:

<u>Ընդունելության պահանջներ</u>

Անգլիայի, Ուելսի և Հյուսիսային Իռլանդիայի բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության տիպային պահանջներն են՝ երկու կամ երեք GCE A-մակարդակներ՝ GCSE-ների հետ միասին կամ դրանց համարժեքը: Շոտլանդիայի ուսումնական հաստատություններում տիպային պահանջները չորս կամ հինգ «բարձր միավորներ» (Higher passes) են կամ դրանց համարժեքները: Հաստատությունները կարող են պահանջել լրացուցիչ որակավորումներ, եթե ցանկանան, սակայն հիմնականները սրանք են: Բոլոր ուսումնական հաստատություններում անհրաժեշտ է նաև անգլերենի իմացություն ցուցաբերել (օրինակ, IELTS թեստի բարձր միավորներով), եթե անգլերենը ձեր առաջին լեզուն չէ: Դուք կարող եք սկսել ձեր ուսումը ՄԹ-ում նախապատրաստական ծրագրով: Աշխատանքի վրա հիմնված դասընթացները (գնահատվող աշխատանք որևէ դասընթացի համար, որը կատարվում է գործատուի պահանջով հիմնարկում՝ workbased courses) ևս առաջարկում են ուղիներ դեպի աստիճան շնորհող դասընթացներ:

<u>Դիմելու գործընթացը</u>

Աստիճան շնորհող լիաժամկետ դասընթացների, աստիճան շնորհող նախապատրաստական (foundation) դասընթացների (միայն Անգլիայում), Ազգային բարձրագույն դիպլոմներ (ԱԲԴ՝ HNDs) և բարձրագույն կրթության դասընթացների դիպլոմներ շնորհող դասընթացների համար դիմելիս պարզապես կիրառում եք մեկ մոտեցում՝ ընդունելությունների կենտրոնացված գործընթացի միջոցով:

Այս ծառայությունը տրամադրվում է Համալսարանների և քոլեջների ընդունելության համակարգի (ՀՔԸՀ՝ UCAS) կողմից: ՄԹ-ի բոլոր համալսարանները (բացի Բաց համալսարանից), քոլեջների և

բարձրագույն կրթության հաստատությունների մեծ մասը, ինչպես նաև հետագա կրթության հաստատությունները, որոնք առաջարկում են բարձրագույն կրթության դասընթացներ, ՀՔԸՅ-ի անդամներ են:

ՀՔԸՅ-ի համակարգը ներառում է ՄԹ-ի, այլ ԵՄ և միջազգային ուսանողների հավաքագրում ընդունելության բոլոր կետերի համար (այսինքն, այդ թվում՝ ընդունելությունը կրեդիտներով) դեպի բուհական մակարդակի ծրագրեր: ՀՔԸՅ-ի մեկ դիմումի ձևով դուք կարող եք դիմել մինչև վեց հաստատություն: ՀՔԸՅ-ն այժմ խրախուսում է դիմել առցանց իր «Դիմել» (‘Apply’) ծառայության միջոցով:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝
«Ուղեցույց: Միացյալ Թագավորությունում ուսանելը և ապրելը 2007-08թթ.», Բրիտանական Խորհուրդ,
http://www.educationuk.org/downloads/study_live_uk.pdf
UKCOSA: Միջազգային կրթության խորհուրդ՝ http://www.ukcosa.org.uk/

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԵԼԸ

Ուսանողների համար սահմանված հատուկ կանոնները հնարավոր են դարձնում աշխատելը ուսանելու ժամանակ: Առկա հնարավորությունները ներառում են կես դրույքով կամ արձակուրդի ժամանակ աշխատանքը, ինչպես նաև դասընթացի մասը կազմող վարձատրվող աշխատանքները (sandwich course placements): Ձեր դասընթացի վերջում նույնիսկ կարող եք դիմել ՄԹ-ում ավելի երկար մնալու՝ վերապատրաստման կամ աշխատանքային փորձի ձեռքբերման նպատակով, կամ նոր ծրագրի շրջանակներում, որը ներդրվել է կառավարության կողմից որոշակի ֆիզիկական գիտությունների, մաթեմատիկայի և ճարտարագիտական դասընթացների շրջանավարտների համար:

Նախքան ՄԹ-ում աշխատանք փնտրելը պետք է ստուգեք, որ ձեր անձնագրի կնիքը կամ դրոշմը ձեզ թույլ է տալիս աշխատել: Անձնագրի համապատասխան կնիք կամ դրոշմ ունեցող ուսանողներին թույլատրվում է աշխատել հետևյալ պայմաններով.

- Դուք չեք կարող վարել ձեր սեփական գործը, լինել ինքնազբաղված, մատուցել ծառայություններ որպես արհեստավարժ մարզիկ կամ զվարճանքի ոլորտի ներկայացուցիչ, կամ հետամուտ լինել կարիերայի՝ ստանձնելով զբաղեցնել լրիվ դրույքով մշտական աշխատանք,

- այն գումարը, որ հույս ունեք վաստակել կես դրույքով կամ արձակուրդի ժամանակ աշխատելով, չի կարող մաս կազմել ձեր ներգաղթի դիմումի: Դուք պետք է ցույց տաք, որ կարող եք փակել ՄԹ-ում ուսանելու և ապրելու ծախսերը առանց զբաղվածության և պետության կողմից ֆինանսական աջակցության,
- ուսումնական կիսամյակի ընթացքում ձեզ միայն կթույլատրվի աշխատել շաբաթական առավելագույնը 20 ժամ,

Լրացուցիչ տեղեկություններ.
http://www.ukcosa.org.uk/files/pdf/info_sheets/working_during_study.pdf
¨ http://www.ukcosa.org.uk/student/information_sheets.php # working_during_study

## բ. Բուհական և հետբուհական կրթաթոշակներ

Կրթաթոշակների և դրամաշնորհների վերաբերյալ տեղեկություններ կարող է տրամադրել ձեր երկրի Կրթության նախարարությունը կամ Կրթության գերատեսչությունը: Բրիտանական Խորհրդի ձեր տեղական գրասենյակը կարող է տրամադրել առկա պարգևների մանրամասներ, այդ թվում` ՄԹ-ի հաստատությունների կողմից առաջարկվող:

Միջազգային ուսանողների համար առկա են հետևյալ հիմնական կրթաթոշակային ծրագրերը.

- Բրիտանական Չիվնինգ կրթաթոշակ` http://www.chevening.com/
- Բրիտանական Համագործակցության Կրթաթոշակների և ընկերակցությունների ծրագիր (Commonwealth Scholarships and Fellowship Plan (CSFP): http://www.csfp-online.org/
- Միջազգային զարգացման նախարարության կրթաթոշակային համատեղ ծրագիր (DFID Shared Scholarship Scheme): http://www.dfid.gov.uk/funding/sharedscholarship.asp
- Արտերկրյա հետազոտող ուսանողների պարգևների ծրագիր (Overseas Research Students Awards Scheme (ORSAS): http://www.orsas.ac.uk/

ՄԹ-ում սովորելու համար կրթաթոշակների և դրամաշնորհների մրցակցությունը շատ ուժեղ է: Դրամաշնորհների տրամադրող կազմակերպությունների մեծ մասը կպնդի, որ դուք պետք է բավարարեք որոշ շատ խիստ չափանիշների: Եթե դուք չեք համապատասխանում դրամաշնորհի բոլոր պահանջներին, ապա ձեր դիմումը չի քննվի:

Դիմելիս հիշեք հետևյալը.

- դուք պետք է դիմեք դրամաշնորհի համար ձեր դասընթացն սկսվելուց առնվազն մեկ տարի առաջ. վերջնաժամկետները տարբեր են, այնպես որ դիմելուց առաջ համոզվեք, որ գիտեք վերջնաժամկետը,
- ձեր դիմումը պետք է լինի պարզ և հակիրճ. դուք պետք է օգտագործեք դրամաշնորհներ տրամադրող մարմնի դիմումի ձևը, եթե այդպիսին գոյություն ունի,
- դրամաշնորհներ տրամադրող մարմինների մեծամասնությունը կտա միայն փոքր գումարներ, որոնք չեն ծածկի դասընթացի ամբողջ ծախքը:

Համապատասխանությունը պահանջներին: Կրթաթոշակների համար դուք պետք է ընդունվեք մինչև մեկ տարի տևող հետբուհական դիպլոմային կամ մագիստրոսական դասընթացներ ՄԹ-ում: (Պարգևներ երբեմն տրվում են նաև ավելի կարճ դասընթացների համար): Իդեալական դեպքում դուք պետք է արդեն իսկ հաստատված լինեք ձեր կարիերայում:

Դիմումներ: Մանրամասների համար կապվեք ձեր երկրի Բրիտանական Խորհրդի կամ Մեծ Բրիտանիայի դեսպանատան կամ Գերագույն Հանձնակատարի հետ: Դիմելիս դուք պետք է բնակվելիս (ռեզիդենտ) լինեք ձեր հայրենի երկրում: Թեկնածուներն ընտրվում են արտերկրում գտնվող բրիտանական դեսպանատների և Գերագույն Հանձնակատարների կողմից:

<u>Եվրոպական Միության ծրագրեր</u>
«Էրազմուս Մունդուս»: «Էրազմուս Մունդուս» ծրագիրն առաջարկում է կրթաթոշակներ բացառիկ որակի ուսանողներին՝ հաճախելու «Էրազմուս Մունդուսի» մագիստրոսական դասընթացների երկու կամ ավելի եվրոպական համալսարաններում: Համակարգն ընդունում է դիմումներ ողջ աշխարհի ուսանողներից, բացառությամբ Եվրոպական Տնտեսական Տարածքի մեջ մտնող երկրների:
http://ec.europa.eu/education/programmes/mundus/index_en.html

<u>«Էրազմուս Մունդուսի արտաքին համագործակցության պատուհան»</u> (վերաբերում է ուսանողներին և ակադեմիական անձնակազմին՝ Աֆրիկայի, Ասիայի, Կարիբյան ավազանի, Արևելյան Եվրոպայի, Լատինական Ամերիկայի, Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի և Արևմտյան Բալկանների համապատասխան երկրներից): «Էրազմուս Մունդուսի արտաքին համագործակցության պատուհանն» աջակցում է

ուսանողների, հետազոտողների և ակադեմիական անձնակազմի փոխանակմանը եվրոպական համապատասխան երկրների և երրորդ երկրների հաստատությունների միջև՝ 1-ից մինչև 34 ամիս ժամանակահատվածով:
http://eacea.ec.europa.eu/extcoop/call/index.htm

## ՄԹ-ի քոլեջները և համալսարանները

ՄԹ-ի բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատությունները միջազգային ուսանողների համար ունեն սահմանափակ թվով կրթաթոշակներ: Այնուամենայնիվ, դրանք կարող են սահմանափակվել որոշակի առարկաներ ուսումնասիրող ուսանողներով կամ որոշակի երկրներից եկած ուսանողներով: Կապվեք այն հաստատության հետ, որտեղ ուսանում եք՝ պարզելու, թե համապատասխանու՞մ եք արդյոք պահանջներին:

## գ. Գլխավոր համալսարանների և քոլեջների ցանկ

- Օքսֆորդի համալսարան՝ http://www.ox.ac.uk/
- Քեմբրիջի համալսարան (ՄԹ, Անգլիա, Քեմբրիջ)՝ http://www.cam.ac.uk/
- Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքականության դպրոցից՝ http://www.lse.ac.uk/
- Լոնդոնի համալսարանական քոլեջ՝ http://www.ucl.ac.uk/
- Լաուբորոյի համալսարան՝ http://www.lboro.ac.uk/
- Բրիստոլի համալսարան (ՄԹ, Անգլիա, Բրիստոլ՝ http://www.bristol.ac.uk/
- Էդինբուրգի համալսարան (ՄԹ, Շոտլանդիա, Էդինբուրգ)՝ http://www.ed.ac.uk/
- Ռոյալ Հոլոուեյ, Լոնդոնի համալսարան՝ http://www.rhul.ac.uk/
- Աստոնի համալսարան՝ http://www.aston.ac.uk/
- Լոնդոնի Քինգզ քոլեջ՝ http://www.kcl.ac.uk/
- SOAS, Լոնդոնի համալսարան: http://www.soas.ac.uk/
- Լանկաստերի համալսարան՝ http://www.lancs.ac.uk/
- Շեֆիլդի համալսարան (ՄԹ, Անգլիա, Շեֆիլդ)՝ http://www.shef.ac.uk/
- Մանչեսթրի համալսարան՝ http://www.manchester.ac.uk/
- Գլազգոյի համալսարան՝ http://www.gla.ac.uk/
- Քուինզ Բելֆաստ՝ http://www.qub.ac.uk/
- Բիրմինգեմի համալսարան՝ http://www.bham.ac.uk/
- Քենթի համալսարան Քենթրբերիում՝ http://www.kent.ac.uk/
- Սթերլինգի համալսարան՝ http://www.external.stir.ac.uk/

- Սըրեյի համալսարան՝ http://www.surrey.ac.uk/
- Սթրաթքրայդի համալսարան՝ http://www.strath.ac.uk/
- Ուելսի Բանգոր համալսարան՝ http://www.bangor.ac.uk/
- Սվոնզիի համալսարան՝ http://www.swansea.ac.uk/
- Լոնդոնի Սիթի համալսարան (ՄԹ, Անգլիա, Լոնդոն)՝ http://www.city.ac.uk/

## ՄԹ-ում ուսանելու համար օգտակար հղումներ

**Նորարարությունների, համալսարանների և հմտությունների գերատեսչություն**
http://www.dfes.gov.uk/providersregister/
http://www.dcsf.gov.uk/recognisedukdegrees/
Տեղեկություններ ճանաչված աստիճանների վերաբերյալ ՄԹ-ի կրթություն և ուսուցում իրականացնողների ռեգիստրում:

**Կրթություն ՄԹ-ում (Education UK)**
www.educationuk.org
http://www.educationuk.org/downloads/study_live_uk.pdf
Ուսման հնարավորությունների ուսումնասիրություն: Տեղեկություններ ՄԹ-ում ուսանելու և ապրելու վերաբերյալ:

**ՀՔԸՀ (UCAS): Համալսարաններ և քոլեջների ընդունելության ծառայություն**
www.ucas.com/apply/index.html
Լոսքըշայր GL52 3LZ, Չելթենհեմ, Նյու բարն Լեյն, Ռոուզհիլ
(Rosehill, New Barn Lane, Cheltenham, Loucestershire GL52 3LZ)
Հեռախոս՝ +44 (0) 870 112 2211 (դիմումներ)
ՄԹ քոլեջների և ինստիտուտների ընդունելության առցանց դիմումներ:
http://www.ucas.com/students/startapplication/faqs/
Հաճախ տրվող հարցեր: Դիմելու կարգը

**ՄԹ Սահմանային գործակալություն**
http://www.ukba.homeoffice.gov.uk/studyingintheuk/
www.ukvisas.gov.uk

**Միջազգային ուսանողների հարցերով ՄԹ Խորհուրդ (UKCOSA)**
Լոնդոն N1 0NX, Սեյնթ Ալբանս Փլեյս 9-17, UKCOSA
(UKCOSA, 9–17 St Albans Place, London N1 0NX)

Հեռախոսային խորհրդատվության ծառայությունը հասանելի է 13:00-ից մինչև 16:00:
+44 (0) 20 7107 9922.
www.ukcosa.org.uk
http://www.ukcosa.org.uk/student/information_sheets.php

Տեղեկատվական թերթիկներ.
«Կացարաններ միջազգային ուսանողների համար», «Ինչպես պատրաստվել ՄԹ-ում սովորելու համար», «Եղեք առողջ», «Ուսումը ՄԹ-ում», «Ֆինանսական աջակցություն»:

**Բրիտանական ապահովագրողների ապահովագրական ասոցիացիա (Insurance Association of British Insurers)**
Լոնդոն EC2V 7HQ,
Գրեշեմ Սթրիթ 51
(51 Gresham Street,
London EC2V 7HQ)
Հեռախոս՝ +44 (0) 20 7600 3333,
Ֆաքս՝ +44 (0) 20 7696 8999,
Ինտերնետային կայք՝ www.abi.org.uk

Տեղեկատվություն ապահովագրական հարցերի և ապահովագրական ընկերությունների կարգավիճակի վերաբերյալ:

**Բրիթիշ Քաունսիլ Լըրնինգ**
**(British Council Learning)**
http://www.britishcouncil.org/learning
http://www.britishcouncil.org/learning-funding-yourstudies.
htm http://www.britishcouncil.org/learning-fundingyour- studies.htm
www.britishcouncil.org/learning-education-informationsheets

Տրամադրում է օգնություն դասընթացների համար ֆինանսավորում գտնելու հարցում՝ կրթաթոշակային ծրագրերի և դեպի հաստատված կայքեր տանող հղումների միջոցով:

**Անգլերենի դասընթացներ**
Կրթությունը ՄԹ-ում (Education UK)՝ www.educationuk.org/english
ԲիԲիՍի-ի համաշխարհային ծառայության անգլերենի ուսուցում (BBC World Service Learning English)՝
www.bbc.co.uk/worldservice/learningenglish
English UK: http://englishuk.com

Անգլերեն լեզվի թեստավորման միջազգային համակարգ` (International English Language Testing System)՝ www.ielts.org
Սովորել անգլերեն (Learn English)՝ www.learnenglish.org.uk
Որակի ապահովում (Quality assurance)՝
www.britishcouncil.org/accreditation
«Ուղեցույց` անգլերենը ՄԹ-ում» (English in the UK guide)
Անգլերեն դասընթացների վերաբերյալ տեղեկություններ:

## 4. Կացությունը ՄԹ-ում

### Կատեգորիաներ

- **Սահմանափակ ժամկետով մնալու թույլտվություն**

Սա թույլտվություն է ՄԹ-ում ժամանակավորապես մնալու համար՝ ձեր վիզայում նշված ժամկետով:

- **Անորոշ ժամանակով մնալու թույլտվություն**

Միացյալ Թագավորությունում օրինական հիմքերով որոշակի ժամկետով ապրելուց հետո (սովորաբար երկուսից հինգ տարի) կարող եք դիմել այստեղ մշտապես ապրելու համար՝ կախված ձեր ունեցած վիզայի կատեգորիայից: Դուք պետք է ուսումնասիրեք համապատասխան կատեգորիան՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու այն մասին, թե կարո՞ղ եք արդյոք, և որքա՞ն ժամկետից հետո կարող եք դիմել մշտական բնակության համար:
Հետևյալ դիմումի ձևերը ՄԹ-ում մշտապես մնալու նպատակի համար են.

### (1) SET(M) ձև

- SET(M) ձևը ամուսնացած և չամուսնացած զուգընկերների կողմից հաստատվելու դիմումների համար է:
- Դուք արդեն ունեք ժամանակավոր թույլտվություն Միացյալ Թագավորությունում մնալու համար (սահմանափակ ժամկետով մնալու թույլտվություն) որպես մշտական բնակչի ամուսին, կին, քաղաքացիական զուգընկեր, կամ ամուսնացած կամ նույն սեռի զուգընկեր,
- ապրել եք այստեղ երկու տարի այս կատեգորիայով, և
- դեռևս ամուսնացած եք կամ գտնվում եք քաղաքացիական զուգընկերության հարաբերություններում և ծրագրում եք ապրել միասին:

http://www.ukba.homeoffice.gov.uk/ukresidency/settlement/applicationtypes/applicationformset (m) /

## (2) SET(O) ձև

SET(O) ձևը հաստատվելու բազմաթիվ այլ տեսակի դիմումների համար է: Դուք պետք է լրացնեք SET(O) ձևը, եթե.

- ունեք աշխատանքի թույլտվություն
- զրկվել եք ձեր զուգընկերոջից,
- բարձր հմտություններ ունեցող միգրանտ եք,
- գրող, կոմպոզիտոր կամ նկարիչ եք,
- Միացյալ Թագավորությունում երկար ժամանակ բնակված անձ եք,
- անձ եք, ով գտնվում է Միացյալ Թագավորությունում այլ նպատակների համար կամ այլ պատճառներով, որոնք ընդգրկված չեն դիմումի այլ ձևերում (սա չի ներառում ապաստանը):
- Կարող են դիմել սովորաբար 5 տարի ՄԹ-ում բնակված անձինք: http://www.ukba.homeoffice.gov.uk/ukresidency/settlement/applicationtypes/applicationformset (o) /

## (3) SET(DV) ձև

SET(DV) ձևը հաստատվելու դիմումների համար է որպես ընտանեկան բռնության զոհ: Դուք պետք է լրացնեք SET(DV) ձևը, եթե Միացյալ Թագավորությունում մնալու ժամանակավոր թույլտվությամբ ապրելիս եք եղել որպես մշտական բնակչի ամուսին, կին, քաղաքացիական զուգընկեր, կամ ամուսնացած կամ նույն սեռի զուգընկեր, և հարաբերությունները խզվել են, քանի որ դուք ենթարկվել եք ընտանեկան բռնության:

## (4) SET(F) ձև

SET(F) ձևը ընտանիքի անդամների կողմից հաստատվելու դիմումների համար է: Դուք պետք է լրացնեք SET(F) ձևը, եթե Միացյալ Թագավորության մշտական բնակչի ընտանիքի անդամն եք, որը ներկայումս ապրում է այստեղ, և դուք պատկանում եք հետևյալ կատեգորիաներից որևէ մեկին.

- մինչև 18 տարեկան երեխա այնպիսի ծնողի, ծնողների կամ ազգականի, որը Միացյալ Թագավորության մշտական բնակիչ է և ներկայումս ապրում է այստեղ,
- մինչև 18 տարեկան որդեգրված երեխա այնպիսի ծնողի (կամ ծնողների), որը (ովքեր) Միացյալ Թագավորության մշտական բնակիչ է (են) և ներկայումս ապրում է (են) այստեղ,
- ծնող, պապ, տատ կամ խնամքի տակ գտնվող մինչև 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի այլ ազգական այնպիսի անձի, որը Միացյալ Թագավորության մշտական բնակիչ է և ներկայումս ապրում է այստեղ:

http://www.ukba.homeoffice.gov.uk/ukresidency/settlement/applicationtypes/applicationformset(f)/

### (5) ELR ձև

Դուք պետք է լրացնեք ELR ձևը, եթե ձեզ տրվել է մուտքի բացառիկ թույլտվություն կամ մնալու բացառիկ թույլտվություն (որը Միացյալ Թագավորությունում ժամանակավորապես մնալու թույլտվություն է, որը տրվել է բացառիկ պատճառներով) չորս կամ ավելի տարի ժամկետով՝ 2003 թ. ապրիլի 1-ից առաջ, և դուք շարունակում եք վախենալ վերադառնալ ձեր ծագման երկիրը:
http://www.ukba.homeoffice.gov.uk/ukresidency/settlement/applicationtypes/applicationformelr/

**Ներգաղթի հարցումների բյուրոն** (**The immigration enquiry bureau - IEB**) կարող է տրամադրել խորհուրդներ մնալու թույլվության և հաստատվելու վերաբերյալ դիմումների հարցերով:
Հեռախոս՝ 0870 606 7766
Textphone՝ 0800 389 8289
Էլ. փոստ՝ indpublicenquiries@ind.homeoffice.gsi.gov.uk

## 5. Ապաստանի տրամադրման կարգը

Ապաստանի տրամադրման ազգային քաղաքականության համառոտ ամփոփում

ՄԹ-ի Սահմանային գործակալությունը (ՄԹՍԳ՝ UKBA), որը մաս է կազմում Ներքին գործերի նախարարության, պատասխանատու է ներգաղթի և ապաստանի իրավունքի ու քաղաքականության համար:

Դիմորդները պետք է ապաստան հայցեն անձամբ, կա՛մ նավահանգստում, կա՛մ ՄԹ մուտք գործելիս, կամ, եթե դա չեն անում մուտք գործելիս, ապա պետք է գնան Asylum Screening Units Ապաստանի քննության երկու բաժիններից մեկը (հարավային Լոնդոնում կամ Լիվերպուլում): Գանգատարկման իրավունքները սահմանափակ են, և առկա է շատ քիչ իրավաբանական ֆինանսական օժանդակություն, ինչը զգալիորեն կրճատել է դիմում-բողոքների թիվը:

Ֆինանսական աջակցություն և կացարան

ՄԹ-ի Սահմանային գործակալությունը (ՄԹՍԳ՝UKBA) կաջակցի ապաստան հայցողներին, սակայն վերջիններս պետք է ցույց տան, որ ապաստանի հայցը ներկայացրել են ՄԹ ժամանելուց հետո ողջամտորեն իրագործելի հնարավորինս կարճ ժամկետում: Եթե նրանք չկարողանան դա անել, ապա ոչ մի աջակցություն չեն ստանա: Ապաստան հայցողների աջակցությունը կազմված է ֆինանսական աջակցությունից և (անհրաժեշտության դեպքում) կացարանի տրամադրումից, սակայն դիմողը պետք է համաձայնի BIA կողմից «ցրվել» մեծ ու փոքր քաղաքներ՝ ՄԹ-ի տարածքով մեկ: Բնակարանային պայմանները շատ տարբեր են: Ապաստանի ծեռքբերման աջակցության մակարդակը կախված է ընտանիքի անդամների տարիքից և թվից, սակայն կազմում է ՄԹ-ի պետական նպաստների 70% -ը (օր., շաբաթական 41,40 ֆունտ ստեռլինգ 25 կամ ավելի տարիքի մեկ անձին, և 64,96 ֆունտ երեխաներ չունեցող զույգին):

Զբաղվածությունը ապաստան հայցելու ընթացքում
Ապաստանի համար դիմած անձանց չի թույլատրվում ստանձնել վարձատրվող աշխատանք, բացի այն դեպքերից, երբ նրանք իրենց դիմումի վերաբերյալ նախնական որոշմանը սպասել են ավելի քան 12 ամիս, և ուշացումն իրենց մեղքով չէ:

Ապաստանի տրամադրման և վերադարձի գործընթացում ներգրավված կազմակերպություններ
Ապաստանի հայցերի ստացում՝ ՄԹ սահմանային գործակալություն (ՄԹՍԳ՝ UKBA)
Աջակցություն/բնակապահովում՝ ՄԹ սահմանային գործակալություն (ՄԹՍԳ), Տեղական իշխանության սոցիալական ծառայությունների վարչություն (միայն չուղեկցվող ապաստան հայցող երեխաներին):

Փախստականների հարցերով տարբեր գործակալություններ աջակցում են ապաստան հայցողներին ապաստան ստանալու գործընթացում:

Դրանք են՝ Փախստականների գործողություններ (Refugee Action), Փախստականների խորհուրդ, Միգրանտների օգնության գիծ (Migrant Helpline), Հյուսիսային Անգլիայի փախստականների ծառայություն (North of England Refugee Service), Շոտլանդիայի փախստականների խորհուրդ, Հյուսիսային փախստականների ծառայություն, Ուելսի փախստականների խորհուրդ:

Աջակցվող կամավոր վերադարձի նախամեկնումային խորհրդատվություն. «Նախընտրություններ» (Choices), Յորքշիրի անվտանգ ապաստարան (Safe Haven Yorkshire), Հյուսիսային Անգլիայի փախստականների ծառայություն, Վուլվերհեմփթոնի ապաստան հայցողների և փախստականների ծառայություն և ՄՄԿ:

Աջակցվող կամավոր վերադարձի ուղևորության աջակցություն և վերաինտեգրում. ՄՄԿ (թեև ՄԹՍԳ-ը պետք է հաստատի բոլոր դիմումները):
Հարկադիր վերադարձ կամ արտաքսում. Սահմանային և ներգաղթի գործակալության կատարողական ստորաբաժանումներ
<u>Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝</u>

- Ներքին գործերի նախարարության Սահմանային գործակալության կայք՝ http://www.ukba.homeoffice.gov.uk/asylum/process/
- Փախստականների խորհուրդ՝ http://www.refugeecouncil.org.uk/
- Շոտլանդիայի փախստականների խորհուրդ՝ http://www.scottishrefugeecouncil.org.uk/info/
- Օգնություն ապաստանի ծեռքբերման հարցում (Asylum Aid)՝ http://www.asylumaid.org.uk/
- ՄԱԿ ՓԳՀ՝ http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/home
- ՄԹ-ում ՄՄԿ-ի առաքելություն՝ http://www.iomlondon.org/

## 6. Ընտանիքների վերամիավորում

Ընտանիքի անդամների հաստատվելը հասանելի է ընտանիքի անդամների հետևյալ կատեգորիաներին.

- մինչև 18 տարեկան երեխա այնպիսի ծնողի, ծնողների կամ ազգականի, որը Միացյալ Թագավորության մշտական բնակիչ է և ներկայումս ապրում է այստեղ,

- մինչև 18 տարեկան որդեգրված երեխա այնպիսի ծնողի (կամ ծնողների), որը (ովքեր) Միացյալ Թագավորության մշտական բնակիչ է (են) և ներկայումս ապրում է (են) այստեղ,
- ծնող, պապ, տատ կամ խնամքի տակ գտնվող մինչև 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի այլ ազգական այնպիսի անձի, որը Միացյալ Թագավորության մշտական բնակիչ է և ներկայումս ապրում է այստեղ.
- ամուսին, կին կամ քաղաքացիական զուգընկեր այնպիսի անձի, որը Միացյալ Թագավորության մշտական բնակիչ է և ներկայումս ապրում է այստեղ:

Ձեր ամուսինը, կինը կամ քաղաքացիական զուգընկերը պետք է ապացուցի, որ.

- ամուսնացել կամ կազմել եք քաղաքացիական զուգընկերություն չորս տարի առաջ,
- չորս տարի ապրել եք միասին Միացյալ Թագավորությունից դուրս, և
- այժմ վերադառնում եք Միացյալ Թագավորություն՝ այստեղ միասին հաստատվելու համար:

Երբ ձեր ամուսինը, կինը կամ քաղաքացիական զուգընկերը ժամանի Միացյալ Թագավորություն, նրան կտրվի թույլտվություն՝ ապրելու և աշխատելու այստեղ երկու տարի: Երկու տարվա ժամկետի ավարտին մոտ, եթե դուք դեռևս ամուսնացած կամ քաղաքացիական զուգընկերության հարաբերությունների մեջ եք և մտադիր եք միասին ապրել, ձեր ամուսինը, կինը կամ քաղաքացիական զուգընկերը կարող է դիմել այստեղ մշտապես բնակվելու համար: Որոշ դեպքերում ձեր ամուսինը, կինը կամ քաղաքացիական զուգընկերը կարող է ստանալ Միացյալ Թագավորությունում մշտապես ապրելու թույլտվություն՝ ժամանելուն պես:

Մշտապես մնալու թույլտվություն ունեցող ծնողների երեխան պետք է ապացուցի, որ.

- չի վարում ինքնուրույն կյանք,
- ամուսնացած կամ քաղաքացիական զուգընկերության հարաբերության մեջ չէ,
- չի կազմել ինքնուրույն ընտանիք, և
- մինչև 18 տարեկան է:

Ձեր երեխան պետք է Միացյալ Թագավորություն մուտք գործելու թույլտվություն ստանա նախքան այստեղ ուղևորվելը: Դա կլինի վիզայի կամ մուտքի թույլտվության վկայականի տեսքով: Դա ձեռք բերելու համար նա պետք է դիմի բրիտանական դիվանագիտական հիմնարկ այն երկրում, որտեղ ապրում է:

<u>Սահմանափակ ժամկետով մնալու թույլտվություն ունեցող ծնողների երեխան</u>

Երեխաները սովորաբար չեն կարող գալ ապրելու Միացյալ Թագավորությունում, եթե ծնողներից մեկն ապրում է այլ երկրում, բացի այն դեպքերից, երբ Միացյալ Թագավորությունում ապրող ծնողը երեխայի համար կրում է միանձնյա պատասխանատվություն, կամ կան լուրջ պատճառներ, թե ինչու երեխային պետք է թույլ տալ գալ այստեղ:

Ձեր երեխան պետք է Միացյալ Թագավորություն մուտք գործելու թույլտվություն ստանա նախքան այստեղ ուղևորվելը: Դա կլինի վիզայի կամ մուտքի թույլտվության վկայականի տեսքով: Դա ձեռք բերելու համար նա պետք է դիմի բրիտանական դիվանագիտական հիմնարկ այն երկրում, որտեղ ապրում է:

Կարող են դիմել մշտապես մնալու թույլտվություն ունեցող անձի հետևյալ հարազատները.

- 65 տարեկան կամ ավելի բարձր տարիքի այրիացած մայրեր և այրիացած հայրեր,
- ծնողներ կամ պապ, տատ, ովքեր ճամփորդում են միասին, եթե նրանցից մեկը 65 կամ ավելի տարեկան է,

Որոշ հանգամանքներում հետևյալ հարազատներին կարող է թույլ տրվել միանալ ձեզ այստեղ.

- 18-ից բարձր տարիքի որդիներ, դուստրեր, քույրեր, եղբայրներ, հորեղբայրներ (մորեղբայրներ) և հորաքույրներ (մորաքույրներ), և
- 65-ից ցածր տարիքի ծնողներ և պապ, տատ:

Ձեր հարազատը պետք է Միացյալ Թագավորություն մուտք գործելու թույլտվություն ստանա նախքան այստեղ ուղևորվելը: Դա կլինի վիզայի կամ մուտքի թույլտվության վկայականի տեսքով: Դա ձեռք բերելու համար նա պետք է դիմի բրիտանական դիվանագիտական հիմնարկ այն երկրում, որտեղ ապրում է:

Ձեզ հարկավոր է նաև հետևյալը.

- Ձեր անձնագիրը կամ ճամփորդական փաստաթուղթը,
- Անձնագրի չափի վերջին ժամանակների (45մմ x 35 մմ) գունավոր լուսանկար,
- Վիզայի վճարը: Դա վերադարձման ենթակա չէ, և դուք պետք է սովորաբար վճարեք այն երկրի տեղական արժույթով, որտեղ դիմում եք:

Ձեր դիմումի հետ կցվող հիմնավորող փաստաթղթերը.

- Ձեր ծննդյան վկայականի բնօրինակը (եթե դիմում եք միանալու ձեր ծնողներին ՄԹ-ում),
- Ապացույցներ, որ ձեր հովանավորը (հարազատը, որին միանալու համար դիմում եք) հաստատված է ՄԹ-ում, օրինակ, նրանց անձնագրի վավերացված պատճենը կամ գրանցման վկայականը,
- Ձեր հովանավորի՝ վերջին ժամանակների բանկային քաղվածքներ կամ խնայողական գրքույկը, ինչպես նաև ՄԹ-ում ձեր հովանավորի զբաղվածության ապացույցներ, որոնք կարող են Մեծ Բրիտանիայում, որոնց թվում կարող են լինել վճարման կտրոններ՝ ցույց տալու, թե ինչպիսի ֆինանսական աջակցություն ունեք դուք,
- Ձեր կացարանի ապացույցներ, օրինակ, հիփոթեքային պայմանագիր կամ վարձակալության պայմանագիր, և ապացույցներ, որ դուք և ձեր խնամքի տակ գտնվող անձինք կարող են մնալ այդ կացարանում, եթե այն վարձակալել կամ տրամադրել է ձեր տեղական իշխանությունը,
- Բժշկական տեղեկանք:

Եթե դուք դիմում եք որպես ծնողը, պապը, տատը կամ խնամքի տակ գտնվող ազգականը այնպիսի անձի, որն արդեն ներկա է և հաստատվել է ՄԹ-ում, պետք է խնդրեք ձեր հովանավորին լրացնել հովանավորությունը ստանձնելու ձևը և կցեք դա ձեր դիմումին: Ստորագրելով ստանձնելու ձևը, ձեր հովանավորը հաստատում է, որ պատասխանատու է լինելու ձեր ապրելու ծախսերի և կացարանի համար՝ ՄԹ-ում ձեր գտնվելու ընթացքում և կարիք չի ունենալու որևէ աջակցության պետական ֆինանսական միջոցներից:

## Ընտանիքի վերամիավորմանն առնչվող օգտակար հղումներ

**Ներգաղթի հարցերով խորհրդատվական ծառայություն (IAS)**
Լոնդոն SE1 4YB
Գրեյթ Դովեր սթրիթ 190
Քաունթի Հաուս, 3 հարկ
(3rd Floor, County House
190 Great Dover Street
London SE1 4YB)
Հեռախոս՝ (+44) (0) 20 7967 1200
Հեռախոս՝ (+44) (0) 20 8814 1559 (հերթապահ գրասենյակը բաց է օրական 24 ժամ)
Ֆաքս՝ (+44) (0) 20 7403 5875
Էլ. փոստ՝ advice@iasuk.org
Ինտերնետային կայք: www.iasuk.org
Խորհրդատվություն և ներկայացուցչություն ապաստանի, ներգաղթի և քաղաքացիության մասին օրենքի հարցերով

**ՄԹ Սահմանային գործակալություն**
http://www.ukba.homeoffice.gov.uk/ukresidency/settlement/applicationtypes/
http://www.ukba.homeoffice.gov.uk/ukresidency/eligibility/partnersandchildren/
http://www.ukba.homeoffice.gov.uk/ukresidency/eligibility/relatives/

Ընտանիքի անդամների իրավունքների և հաստատվելու դիմումների վերաբերյալ տեղեկություններ:

**ՄԹ վիզաների ծառայություններ**
**(UK Visa Services)**
http://www.ukvisas.gov.uk/en/howtoapply/infs/inf6familymembers
Հաճախ տրվող հարցեր՝ Ընտանիքի անդամներին միանալը

**Ներգաղթին առնչվող հարցումների բյուրո**
Ներգաղթի սահմանային գործակալություն,

Սըրեյ CR9 2BY, Քրոյդոն,
Ուելսլի Ռոուդ 40, Լունար Հաուս
(Lunar House, 40 Wellesley Road,
Croydon, Surrey, CR9 2BY)

Հեռախոս՝ 0870 606 7766
Էլ. փոստ՝ indpublicenquiries@ind.homeoffice.gsi.gov.uk
Տրամադրում է խորհրդատվություն մնալու թույլտվության և հաստատվելու դիմումների վերաբերյալ՝ ընտանիքին միանալու նպատակով:

# 7. Առողջապահության համակարգը

Հանրային առողջապահությունը ՄԹ-ում
Մեծ Բրիտանիայում պետական առողջապահություն իրականացնողը հայտնի է որպես Ազգային առողջապահական ծառայություններ (ԱԱԾ՝ NHS): ԱԱԾ-ի կողմից մատուցվող ծառայությունները ներառում են հիվանդանոցներ, ընտանեկան բժիշկներ, նեղ մասնագետներ, ատամնաբույժներ, դեղագործներ, օպտիկայի մասնագետներ և շտապ օգնության ծառայությունը: ԱԱԾ-ի կողմից մատուցվող ոչ բոլոր ծառայություններն են անվճար: Եթե վճարելուց ազատված չեն, հիվանդները վճարում են դեղատոմսերի, տեսողության ստուգումների, ԱԱԾ-ի ակնոցների և ատամների բուժման (սուբսիդավորված) ամրագրված ծախքերը: Հիվանդանոցային բուժումը, շտապ օգնության ծառայությունը և բժշկական կոնսուլտացիաները մնում են անվճար:

ԱԱԾ-ի կողմից բուժման իրավունք
Հետևյալ հիմնական խմբերին ԱԱԾ-ն տրամադրում է անվճար կամ սուբսիդավորված բուժում.

- Մեծ Բրիտանիայում բնակվելու իրավունք ունեցողներ, ովքեր ներկայումս բնակվում են Մեծ Բրիտանիայում (սա բացառում է Մեծ Բրիտանիայի քաղաքացիներին, ովքեր բնակվում են արտասահմանում),
- Ցանկացած ոք, ով եղել է Բրիտանիայի բնակիչ նախորդ տարում, կամ, եթե դա տևել է 6 ամսից պակաս, հիմնականում ֆինանսավորվում են Միացյալ Թագավորության կառավարության կողմից,
- ԵՄ քաղաքացիներ,
- Փախստականներ և ապաստան հայցողներ, որոնց դիմումը դեռևս քննվում է,
- Ուսանողներ (6 ամսից ավելի տևող դասընթացների, կամ, եթե դասընթացների տևողությունը 6 ամսից պակաս է, հիմնականում ֆինանսավորվում են Միացյալ Թագավորության կառավարության կողմից),

- Բրիտանական աշխատանքի թույլտվություն ունեցող ցանկացած ոք, ով աշխատում է ՄԹ-ում՝ այնպիսի գործատուի համար, որը գտնվում է ՄԹ-ում կամ գրանցված է ՄԹ-ում որպես արտերկրյա գործատուի մասնաճյուղ (սա ներառում է ինքնազբաղված անձանց): Դուք պետք է իրականում աշխատելիս լինեք, ոչ թե աշխատանք որոնելիս),
- Որևէ կամավորական կազմակերպության ցանկացած չվարձատրվող աշխատող, որը (կազմակերպությունը) առաջարկում է նույնպիսի ծառայություններ, ինչպիսիք՝ առողջապահական մարմինը կամ տեղական իշխանության սոցիալական ծառայությունների բաժինը,
- Ցանկացած ոք, ով եկել է մշտապես ապրելու ՄԹ-ում: Եթե դուք դիմում եք մշտական բնակության համար այստեղ հասնելուց հետո, դուք պետք է վճարեք՝ մինչև ձեր դիմումը հաստատվի,
- Ցանկացած ոք, ով ստանում է ՄԹ-ի պատերազմի հաշմանդամության թոշակ կամ պատերազմի այրիների թոշակ,
- Ցանկացած ոք, ով իր հայրենի երկրի իշխանությունների կողմից ուղեգրվում է սահմանված բուժման ՄԹ-ում՝ ըստ երկկողմ համաձայնագրի պայմանների,
- Ցանկացած ոք, ով կալանավորված է և գտնվում է բանտում, կամ որին պահել են ՄԹ-ի Ներգաղթի իշխանությունները,
- Վերը նշված չափանիշների համաձայն վճարելուց ազատված ցանկացած անձի ամուսինը կամ կինը և խնամքի տակ գտնվող երեխաները, եթե նրանք մշտապես ապրում են տվյալ անձի հետ: Մի քանի շաբաթով կամ ամսով այցի գալը չի ազատում վճարումներից:

Եթե դուք չեք պատկանում այն կատեգորիաներից մեկին, որոնք կարող են ստանալ անվճար բուժում, ձեզ կարող են խնդրել վճարել ցանկացած հիվանդանոցային բուժման համար: Այդ իսկ պատճառով դուք գուցե ցանկանաք ապահովել, որ ունեք առողջության ապահովագրություն՝ ՄԹ-ում ձեր մնալու ժամանակահատվածի համար:

Բրիտանիայի հետ փոխադարձ առողջապահական համաձայնագրեր ունեցող երկրների քաղաքացիները ևս իրավունք ունեն բուժում ստանալու ԱԱԾ-ից, թեև վճարումներից ազատված լինելը սովորաբար սահմանափակվում է անհետաձգելի բուժմամբ: Հետևյալ երկրները ՄԹ-ի հետ ունեն նման համաձայնագրեր.

- Եվրոպական տնտեսական տարածքի երկրները,

- Բոսնիան և Հերցեգովինան, Խորվաթիան, Սերբիան, Չեռնոգորիան, նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետությունը:

Ընդհանուր պրակտիկայով զբաղվող բժիշկների գրանցման Ընտանեկան առողջության ծառայության մարմինները (FHSAs) հրապարակում են իրենց տարածքների բժիշկների (ինչպես նաև ատամնաբույժների, դեղագործների և օպտիկայի մասնագետների) ցուցակները, որոնք առկա են գրադարաններում, փոստատներում, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններում և քաղաքացիների խորհրդատվության բյուրոներում: Ընդհանուր պրակտիկայով զբաղվող բժիշկների ցուցակները կարելի է գտնել նաև «Դեղին էջերում»:

Երբ ցանկանում եք դիմել բժշկի, սովորաբար պետք է պայմանավորվեք: Ընդհանուր պրակտիկայով զբաղվող բազմաթիվ բժիշկներ ունեն նաև բաց վիրահատությունների ժամեր (երբ դուք կարող եք տեսնել բժշկին առանց պայմանավորվածության), որոնք սովորաբար լինում են աշխատանքային օրերին առավոտյան ժամը 9-11-ը:

Եթե դուք այցելու եք Միացյալ Թագավորությունում կամ ունեք այստեղ ապրելու ժամանակավոր թույլտվություն (սահմանափակ ժամկետով մնալու թույլտվություն), հնարավոր է, որ կարողանաք գրանցվել ձեր տարածքի ընդհանուր պրակտիկայով զբաղվող բժշկի մոտ և ստանալ անվճար բուժում: Ընդհանուր պրակտիկայով զբաղվող բժիշկը կարող է որոշել՝ գրանցե՞լ ձեզ, թե՝ ոչ: Հնարավոր է, որ դուք չկարողանաք ստանալ ամբողջական հիվանդանոցային բուժում, քանի որ դրա համար պետք է լինեք մշտական բնակիչ կամ ապրած լինեք այստեղ մեկ տարի: Սա վերաբերում է նույնիսկ նրանց, ովքեր Բրիտանիայի քաղաքացի են կամ էլ անցյալում ապրել կամ աշխատել են այստեղ:

Եթե վստահ չեք, թե ուր գնալ առողջապահական ծառայություններ, աննշան վնասվածքի մասին խորհրդատվություն ստանալու կամ բուժօգնության մասին ընդհանուր հարցում անելու համար, կարող եք զանգահարել ԱԱԾ-ի ուղիղ հեռախոսահամարով՝ 0845 4647: Երբ ձեր զանգին պատասխանեն, ասացեք, թե ինչ լեզվով եք ուզում խոսել, և, հարկ եղած դեպքում, ձեզ կմիացնեն թարգմանչի հետ: Այս հեռախոսային ծառայությունը հասանելի է օրական 24 ժամ՝ շաբաթը 7 օր: Ծառայությունը համալրված է բուժքույրերով և մասնագետ խորհրդատուներով, ովքեր ձեզ կտրամադրեն գաղտնի խորհուրդներ:

Ծախսերը
Միացյալ Թագավորության մշտական բնակիչները չեն վճարում ընդհանուր պրակտիկայով զբաղվող բժշկի կողմից կամ հիվանդանոցում բուժվելու համար: Ցածր եկամուտ ունեցող մշտական ռեզիդենտներին կարող է տրվել լրացուցիչ անվճար բուժօգնության իրավունք:

Վիզա ունենալով, դուք կկարողանաք ստանալ բուժօգնություն Առողջապահության ազգային ծառայությունից, որը մասամբ կամ ամբողջությամբ կարող է լինել անվճար՝ կախված ձեր կացության կարգավիճակից և այն բանից, թե որքան ժամանակ եք ապրում Միացյալ Թագավորությունում:

Առողջության պահպանման որոշ ծառայություններ անվճար են բոլորի համար: Դրանք են՝

- բուժում պատահարների և անհետաձգելի բուժօգնության (A & E) բաժանմունքում կամ ԱԱԾ-ի որևէ բժշկական կենտրոնում (walk-in centre), որը մատուցում է նույնպիսի ծառայություններ, ինչպիսիք՝ A & E բաժանմունքը,
- որոշ վարակիչ հիվանդությունների բուժում (ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համար անվճար են միայն առաջին ախտորոշումը և դրան հաջորդող խորհրդատվությունը),
- հարկադիր հոգեբուժական բուժում, և
- ընտանիքի պլանավորման ծառայություններ:

Անհետաձգելի դեպքեր
Մեծ Բրիտանիայում, անկախ ազգությունից և վճարունակությունից, անհետաձգելի դեպքերի հիվանդները բուժվում են անվճար: Միայն այն դեպքում, եթե ձեզ հիվանդանոցում պահել են ավելի քան մեկ գիշեր, և դուք քաղաքացին եք մի երկրի, որը չունի փոխադարձ առողջապահական համաձայնագիր ՄԹ-ի հետ, ձեզանից ավելի ուշ կպահանջեն վճարել բուժման համար: Ցանկացած հանգամանքներում ձեզ չեն մերժի տրամադրել անհետաձգելի բուժօգնություն:

Եթե դուք ֆիզիկապես ի վիճակի եք, պետք է հասնեք ձեր մոտակա հիվանդանոցի պատահարների և անհետաձգելի բուժօգնության (A & E) բաժանմունք: Դրանց մեծ մասը բաց է 24 ժամ:

Շտապ օգնություն, ոստիկանություն և հրշեջ ծառայություններ զանգահարելու համար օգտվեք 999 ընդհանուր շտապ հեռախոսահամարից: Եթե դուք կամ ձեր ընտանիքի անդամ(ներ)ը ծանր

հիվանդ եք, և կարիք ունեք հրատապ բժշկական ուշադրության, ապա հավաքեք այս համարը և խնդրեք շտապ օգնության ծառայությունը: Ձեզ կհարցնեն, թե ինչ խնդիր ունեք, և ձեր գտնվելու վայրը: Այս զանգն անվճար է:

Առողջության առնչվող ցանկացած հարցերով զանգահարեք ԱԱԾ-ի 24-ժամյա օգնության գիծ՝ 0845 4647:

# 8. Սոցիալական ապահովության համակարգը

<u>Օտարերկրյա քաղաքացիները ՄԹ-ի սոցիալական ապահովության համակարգում</u>
ՄԹ-ում սոցիալական ապահովության համակարգում օտարերկրյա աշխատողի ընդգրկված լինելը կախված է նրա քաղաքացիությունից, և այն բանից, թե նա նախկինում վճարե՞լ է արդյոք ՄԹ-ի որևէ Ազգային Ապահովագրության վճարներ.

- Եվրոպական տնտեսական տարածքի (ԵՏՏ) երկրների քաղաքացիները սովորաբար օգտվում են նույն նպաստներից, ինչ՝ ՄԹ քաղաքացիները՝ որոշակի պայմաններով.
- երրորդ երկրների քաղաքացիներն ընգրկվում են ՄԹ սոցիալական ապահովության համակարգում, եթե նրանց հայրենի երկիրը ՄԹ-ի հետ ունի սոցիալական ապահովության վերաբերյալ առանձին համաձայնագիր:

Եթե դուք ընդգրկված չեք ՄԹ-ի սոցիալական ապահովության նպաստների համակարգում, խորհուրդ է տրվում շարունակել կատարել ձեր հայրենի երկրի սոցիալական ապահովության համակարգի մուծումները՝ ավելի փոքր չափերով, որպեսզի հնարավոր լինի պահպանել ձեր կենսաթոշակների իրավունքները և այլն: Դուք պետք է սա ստուգեք ձեր հայրենի երկրի սոցիալական ապահովագրության գրասենյակի հետ:

Տեղեկություններ և համաձայնագրերի ցանկը կարելի է ստանալ աշխատանքի և թոշակների վարչությունից:

<u>Ազգային ապահովագրական մուծումներ</u>
Դուք կատարում եք ազգային ապահովագրական մուծումներ (ԱԱՄ՝ NICs), եթե վարձու աշխատող եք կամ ինքնազբաղված և 16 և ավելի տարեկան եք, պայմանով, որ ձեր վաստակը որոշակի մակարդակից

ավելին է: Դուք կատարում եք ազգային ապահովագրական մուծումներ՝ ապահովելու սոցիալական ապահովության, նպաստների և թոշակների ձեր իրավունքը: ԱԱՄ-ը ինքնաբերաբար պահվում է ձեր աշխատավարձից կամ հաշվարկվում է ձեր ինքնագնահատման հարկային վերադարձից:

Կախված ձեր իրավիճակից, դուք վճարում եք տարբեր կարգի ԱԱՄ.

- եթե դուք աշխատում եք և վաստակում նվազագույն շեմից ավելի, ապա վճարում եք 1-ին կարգի ԱԱՄ,
- եթե դուք ինքնազբաղված եք, վճարում եք 2-րդ կարգի ԱԱՄ՝ բազային հաստատուն դրույքաչափով և 4-րդ կարգի ԱԱՄ՝ որպես ձեր հարկվող շահույթի տոկոս,
- եթե դուք ունեք բացթողումներ ձեր ազգային ապահովագրության գրանցումներում, կամ չեք կատարում ազգային ապահովագրական մուծումներ, քանի որ դրամաշնորհ եք ստացել, ապա կարող եք կատարել կամավոր մուծումներ (3-րդ կարգի ԱԱՄ), եթե ցանկանում եք պահպանել ՄԹ-ի թոշակի ձեր իրավունքը:

Ձեր կատարելիք ԱԱՄ-ի տեսակը և մակարդակը կախված է այն բանից, թե որքան եք վաստակում և արդյոք վարձու աշխատող եք, թե՝ ինքնազաբաղված: Դուք դադարում եք վճարել ԱԱՄ, երբ հասնում եք պետական կենսաթոշակային տարիքի: Դա ներկայումս 65 տարին է տղամարդկանց համար և 60 տարին՝ կանանց համար, սակայն 2010-2020 թթ. ժամանակահատվածում կանանց համար աստիճանաբար կբարձրացվի մինչև 65-ի:

<u>Ազգային ապահովագրական համար</u>
Ձեր Ազգային Ապահովագրական համարը (ԱԱ համար) ձեր իսկ անձնական հաշվի համարն է: Համարն ապահովում է, որ ազգային ապահովագրության վճարները և հարկը, որ դուք վճարում եք, պատշաճ կերպով գրանցվեն ձեր հաշվի վրա: Դա նաև գործում է որպես ամբողջ սոցիալական ապահովության համակարգի հղման համար:

ԱԱ համարանիշի համար դիմելիս դուք պետք է զանգահարեք ԱԱ հատկացնող «Ջոբսենթըր փլաս» (Jobcentre plus) ծառայության օգնության հեռախոսահամարով՝ 0845 600 0643: Նրանք կհամոզվեն, որ ձեզ համար է հարկավոր, և ձեզ համար կկազմակերպեն ինքնության ապացուցման հարցազրույց:

ԱԱ մուծումներից կախված նպաստներ
Ձեր իրավունքը՝ ստանալու հետևյալ նպաստները և (կամ) գումարը, կախված կլինի ձեր (կամ, որոշ դեպքերում, ձեր ամուսնու/կնոջ կամ քաղաքացիական զուգընկերոջ) ԱԱՄ մուծումներից.

- մուծումների վրա հիմնված աշխատանք որոնողների նպաստ (միայն 1-ին կարգի ԱԱՄ),
- անաշխատունակության նպաստ (եթե չեք կարողանում աշխատել երկար ժամանակ՝ հիվանդության կամ վնասվածքի պատճառով),
- պետական թոշակ,
- լրացուցիչ պետական թոշակ (միայն 1-ին կարգի ԱԱՄ),
- այրիացած ծնողների նպաստ,
- ծանր կորստի նպաստ,
- ծանր կորստի վճար:

Բժշկական ծառայությունների և ապահովագրության հարցերի օգտակար հղումներ

**Առողջապահության ազգային ուղիղ ծառայություն**
**(National Health Service Direct)**
www.nhsdirect.nhs.uk
NHS Direct-ի հեռախոսային ծառայության համարը՝ 0845 46 47՝ ցերեկվա կամ գիշերվա ցանկացած ժամի:
Տրամադրում է տեղեկություններ և խորհրդատվություն առողջության, հիվանդությունների և առողջապահական ծառայությունների մասին, որպեսզի հնարավորություն տա հիվանդներին որոշումներ կայացնել իրենց և իրենց ընտանիքների առողջության պահպանման մասին: http://www.nhsdirect.nhs.uk/Find/Results/index.aspx?WT.svl=nav
Գտնել տեղական առողջապահական ծառայություն:

**Անգլիայի ԱԱԾ**
**(NHS England)**
http://www.nhs.uk/Pages/homepage.aspx
Առողջապահական տեղեկություններ միայն Անգլիայի համար, այդ թվում՝ ինչպես գտնել տեղական ծառայություն ձեր տարածքում:

**Առողջապահության նախարարություն (Department of Health)**
http://www.dh.gov.uk/en/index.htm
http://www.dh.gov.uk/en/Healthcare/Entitlementsandcharges/index.htm

Տրամադրում է առողջապահության և սոցիալական խնամքի քաղաքականություն, ուղղորդում և հրատարակություններ ԱԱԾ-ի և սոցիալական խնամքի մասնագետների համար:
Թերթիկ՝ «Գիտեի՞ք, որ գուցե պետք է վճարեք հիվանդանոցային բուժման համար այստեղ գտնվելիս»:
http://www.dh.gov.uk/en/Publicationsandstatistics/Publications/
PublicationsPolicyAndGuidance/DH_4088879

Տեղեկություններ առողջապահական ծառայությունների մասին այցելուների համար

**Առողջապահությունը և սոցիալական խնամքը Հյուսիսային Իռլանդիայում**
http://www.ni.nhs.uk/
Առողջապահության և սոցիալական խնամքի վերաբերյալ կայք: Ծառայություններ Հյուսիսային Իռլանդիայում (հղումներ «Acute» հիվանդանոցների և համայնքային ծառայություններին, ընդհանուր պրակտիկայով զբաղվող բժիշկների վիրահատարաններին և կլինիկաներին, առողջապահական խորհուրդներին և գործակալություններին, կենտրոնական կառավարության առողջապահական ծառայություններին):

**ԱԱԾ Ուելսի ուղղակի ծառայություն**
**(NHS Direct Wales)**
http://www.nhsdirect.wales.nhs.uk/
Տեղեկություններ Ուելսի առողջապահական ծառայությունների վերաբերյալ:

**NHS Connecting for Health**
http://www.connectingforhealth.nhs.uk/
Աջակցում է ԱԱԾ-ին՝ հիվանդներին տրամադրելու ավելի լավ, անվտանգ խնամք նոր համակարգչային համակարգերի և ծառայությունների միջոցով, որոնք ընդհանուր պրակտիկայի բժիշկներին և համայնքային ծառայությունները կապում են հիվանդանոցներին:

**Նորին Մեծության Եկամուտների և մաքսերի գործակալություն**
**HM Revenue& Customs (HMRC)**
http://www.hmrc.gov.uk/
Պատասխանատու է հարկային եկամուտների մեծ մասի հավաքման, ինչպես նաև հարկային վարկերի և մանկական նպաստների վճարման համար:

http://www.hmrc.gov.uk/employers/tmanationalinsurance.shtml
Տեղեկություններ Ազգային ապահովագրական համակարգի վերաբերյալ:
http://www.hmrc.gov.uk/nic/tables07_08.htm
Ազգային Ապահովագրական աղյուսակներ (2007-08 թթ.):
http://www.hmrc.gov.uk/rates/nic.htm
Դրույքաչափեր և նպաստներ: Ազգային ապահովագրական մուծումներ

Ապահովագրական մուծումներ

**Աշխատանքի և թոշակների վարչություն**
http://www.dwp.gov.uk/lifeevent/benefits/ni_number.asp
Էլ. փոստ՝ tvp.internationalqueries @ thepensionservice.gsi.gov.uk
Հեռախոս՝ 44 191 218 7777
Ֆաքս՝ 44 191 218 3836
Սոցիալական ապահովությանն առնչվող տեղեկություններ և ծառայություններ, նպաստներ և մուծումներ
http://www.dwp.gov.uk/lifeevent/benefits/social_security_ag
reements.asp
Սոցիալական ապահովության վերաբերյալ համաձայնագրեր ՄԹ-ի և այլ երկրների միջև:

**ՄԹ ցանց**
**(Network UK)**
http://www.britishcouncil.org/eumobility-working-in-uksocial-security.htm
Էական տեղեկություններ սոցիալական ապահովության վերաբերյալ:

# 9. Բնակարանային պայմանները Մեծ Բրիտանիայում

**Direct Gov**
http://www.direct.gov.uk/en/HomeAndCommunity/index.htm
էական տեղեկություններ բնակարանային պայմանների մասին «Տուն և համայնք» բաժնում:

**Բնակարաններ**
www.findaproperty.com
www.propertyfinder.com
www.rightmove.com
www.torent.co.uk
Ընդհանուր տեղեկություններ վարձակալության ծախքերի և բնակարանների տեսակների մասին:

**Ընդհանուր կացարաններ**
http://www.communities.gov.uk/housing/rentingandletting/
privaterenting / housesmultiple /
Ընդհանուր բնակարաններ, հյուրատներ, հանրակացարաններ և ուսանողական բնակելի համալիրներ:

**Անշարժ գույքի գործակալություններ**
Անշարժ գույքի գործակալությունների ազգային ընկերակցություն
http://www.naea.co.uk/
www.ukpropertyshop.co.uk
Ընդհանուր տեղեկություններ վարձակալության գործակալների և անշարժ գույքի գործակալների մասին ամբողջ ՄԹ-ում:

**Բնակարանների որոնման առցանց կայքեր**
www.housepals.co.uk
www.loot.com
www.fish4.co.uk
www.accommodationLondon.net
www.intoLondon.com
www.accommodation-uk.net/
www.ukaccommodationsearch.co.uk/

Ընդհանուր օգտագործման բնակարանների տվյալների շտեմարան

**Ուսանողական կացարաններ**
www.accommodationforstudents.com/
www.homesforstudents.co.uk/
www.studentpad.co.uk/
Ուսանողական կացարանների և ընդհանուր բնակարանների տվյալների շտեմարաններ:

**Բնակարաններ և բարեկեցություն**
Քաղաքացիների խորհրդատվության բյուրո՝ http://www.cas.org.uk/
Տեղեկություններ անօթևանների համար՝ http://www.paih.org/
Վստահ գործողություններ բնակապահովման ոլորտում՝
http://www.paih.org/
Կացարաններ Շոտլանդիայում՝ http://www.shelterscotland.org.uk/

# 10. Արտերկրյա որակավորումների և դիպլոմների ճանաչում

Եթե ցանկանում եք աշխատել, ուսանել կամ կատարել հետազոտություններ ՄԹ-ում, գուցե հարկ լինի հաստատելու, որ ձեր որակավորումները ճանաչվում են այստեղ: Ստորև կգտնեք տեղեկություններ աստիճանների դասակարգման և համարժեքության, ինչպես նաև ՄԹ-ում վերապատրաստվելու կամ աշխատելու համար պահանջվող հիմնական որակավորումների վերաբերյալ:

Համարժեքության ստուգում

Քննական մարմինները ձեզ կտան տեղեկություններ ՄԹ-ում իրենց քննությունների ճանաչման մասին՝ կրթական հաստատություններից, մասնագիտական մարմիններից, գործատուներից կամ պետական վարչություններից: Քննական մարմինները ձեզ նաև կտեղեկացնեն որակավորումների շրջանակներում ցանկացած համարժեքության կամ տեղավորման վերաբերյալ: ՄԹ-ում և ամբողջ աշխարհում համարժեքության և ճանաչման վերաբերյալ տեղեկությունների այլ աղբյուրներ են եվրոպական ազգային տեղեկատվական կենտրոնների (ENIC) և Ակադեմիական ճանաչման ազգային տեղեկատվական կենտրոնների (ԱճԱՏԿ՝ NARIC) ցանցերը, ՄԹ-ի ԱճԱՏԿ-ը և ՄԹ Ազգային ռեֆերենսային կետը (NRP):

Ակադեմիական և մասնագիտական որակավորումների ճանաչման համար պատասխանատու մարմիններ

Բարձրագույն ուսումնական հաստատություններ և տարբեր շահագրգիռ կողմեր, այդ թվում՝
ՄԹ (ԱճԱՏԿ՝ NARIC), ՄԹ Ազգային Յուրոփաս կենտրոն (UK National Europass Centre - UK NEC), Կրթության և հմտությունների վարչություն, Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալություն(QAA), «ՄԹ-ի համալսարաններ» (UUK) և Տնօրենների մշտական խորհրդաժողով (SCOP):

ՄԹ-ում վերապատրաստվելու կամ ուսանելու համար պահանջվող որակավորումներ

Եթե դուք մտադիր եք ուսանել կամ վերապատրաստվել ՄԹ-ում, այցելեք «Կրթությունը ՄԹ-ում» կայքը՝ տարբեր դասընթացների ընդունելության պահանջները պարզելու համար: Հնարավոր է, որ ձեզանից պահանջվի ցույց տալ, որ ձեր անգլերենի իմացության մակարդակը բավարար է, որի

դեպքում դուք պետք է անցնեք Անգլերեն լեզվի միջազգային թեստավորման համակարգի (IELTS) քննություն կամ դրա համարժեքը:

Ազգային ճանաչման տեղեկատվական կենտրոն Միացյալ Թագավորության համար
Միացյալ Թագավորություն, GL50 1XP
Գլոսթերշիր, Չելթենհեմ
Օրյել Րոուդ, Օրյել Հաուս
(Oriel House, Oriel Road
Cheltenham, Gloucestershire
GL50 1XP, United Kingdom)
Հեռախոս՝ +44 (0) 870 990 4088
Ֆաքս՝ +44 (1) 242 258611
Էլ. փոստ՝ info@naric.org.uk
http://www.naric.org.uk/
http://www.enic-naric.net/

ՄԹ Ազգային Յուրոփաս կենտրոն (UK National Europass Centre - UK NEC) http://www.uknec.org.uk/index.asp?page=38

Նախնական և միջին մասնագիտական որակավորումների ՄԹ-ի ազգային ռեֆերենսային կետ
Միջազգային որակավորումների գնահատում
Հեռ.՝ +44 (0) 870 9904088
E-mail: info@uknrp.org.uk
Web: http://www.uknrp.org.uk/

# 11. Աջակցման ծառայություններ

## Պետական գործակալություններ

**Ներգաղթի ծառայության հանձնակատարի գրասենյակ** (ՆԾՀԳ՝ OISC) http://www.oisc.org.uk/
Տրամադրում է ներգաղթի վերաբերյալ խորհուրդներ և խորհրդատվություն:

**Ապաստանի և ներգաղթի տրիբունալ**
http://www.ait.gov.uk/
Լսում է Ներքին գործերի քարտուղարի և նրա պաշտոնատար անձանց

որոշումների դեմ գանգատները ապաստանի, ներգաղթի և քաղաքացիության հարցերում:

**Խորհուրդներ քաղաքացիներին (Citizen Advice)**
Web: http://www.citizensadvice.org.uk/
Օգնում է մարդկանց լուծել իրենց դրամական, իրավական և այլ խնդիրներ՝ տրամադրելով տեղեկատվություններ և խորհուրդներ: Ունի գրասենյակներ ողջ ՄԹ-ում:

**Ռասսայական հավասարության հանձնաժողով**
http://www.cre.gov.uk/
Աշխատում է խտրականության վերացման, անհավասարության նվազեցման, մարդու իրավունքների պաշտպանության և լավ հարաբերությունների կառուցման ուղղությամբ՝ ապահովելով, որ յուրաքանչյուր ոք ունենա հասարակական կյանքին մասնակցելու արդարացի հնարավորություն:

**Ներգաղթի խորհրդատվական ծառայություն (ՆԽԾ՝ IAS)**
Հեռախոս՝ 020 7967 1200
Ֆաքս՝ 020 7403 5875
Ինտերնետային կայք՝ http://www.iasuk.org/
Ներգաղթի և ապաստանի հարցերում օգնության գիծ:

**Բարօրության և ներգաղթածների համատեղ խորհուրդ (ԲՆՀԽ՝ JCWI)**
Հեռախոս՝ +44 02 (0) 7251 8708
Ֆաքս՝ +44 02 (0) 7251 8707
Էլ. փոստ՝ info@jcwi.org.uk
http://www.jcwi.org.uk/
Խորհուրդների հեռախոսագծով անվճար իրավաբանական խորհրդատվություն ներգաղթի, քաղաքացիության և ապաստանի հարցերում:

## Միջազգային կազմակերպություններ

**Միգրացիայի Միջազգային Կազմակերպության (ՄՄԿ) Առաքելությունը Միացյալ Թագավորությունում**
Տեղեկատվություն, խորհրդատվություն և օգնություն միգրացիայի հարցերում:
Լոնդոն, SW1P 1RR
Արթիլերի Ռոու
Վեսթմինսթեր Փելիս Գարդենզ 21

(21 Westminster Palace Gardens
Artillery Row
London, SW1P 1RR)
Հեռախոս՝ 020 7233 0001
Ֆաքս՝ 020 7233 3001
Անվճար հեռախոս՝ 0800 783 2332
Ինտերնետային կայք՝ http://www.iomlondon.org/

**Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԱԿ ՓԳՀ)**
Լոնդոն, WC2R 1HH
138 - 142 Սթրենդ
Սթրենդ Բրիջ Հաուս
Strand Bridge House
138 - 142 Strand
London, WC2R 1HH
Հեռ.՝ 020 7759 8090
Ֆաքս՝ 020 7759 8119
Էլ. փոստ՝ gbrloea@unhcr.org
http://www.unhcr.org.uk/
Իրավաբանական և տեղեկատվական ծառայություն փախստականների և ապաստանի հարցերով:

## ՀԿ-ներ

**ՄԹ-ում «Ամնեսթի ինթերնեշնլ»-ի (Amnesty International) գրասենյակ Անգլիայում ԱԻ գրասենյակ (AI England)**
Մարդու իրավունքների պաշտպանության գործողությունների կենտրոն
Լոնդոն EC2A 3EA
Նյու Ինն Յարդ 17-25

(17-25 New Inn Yard
London EC2A 3EA)
Հեռախոս՝ +44 (0) 20 7033 1500
Ֆաքս՝ +44 (0) 20 7033 1503
Էլ. փոստ՝ sct@amnesty.org.uk
http://www.amnesty.org.uk/

**«Ամնեսթի ինթերնեշնլ»-ի գրասենյակ Հյուսիսային Իռլանդիայում**
Օրմեու Րոուդ 397

Բելֆաստում, BT7 3gp
(397 Ormeau Road
Belfast, BT7 3GP)
Հեռ.՝ +44 (0) 28 9064 3000
Էլ. փոստ՝ nireland@amnesty.org.uk

**«Ամնեսթի ինթերնեշնլ»-ի գրասենյակ Շոտլանդիայում**
Էդինբուրգ EH12 5EZ
Հեյմարքիթ Թերաս 9
(9 Haymarket Terrace
Edinburgh EH12 5EZ)
Հեռ.՝ +44 (0) 844 800 9088
Ֆաքս՝ +44 (0) 131 313 7000
Էլ. փոստ՝ scotland@amnesty.org.uk

**«Ամնեսթի ինթերնեշնլ»-ի գրասենյակ Ուելսում**
Temple Court
Cathedral Road,
Cardiff CF11 9HA
Հեռ.՝ +44 (0) 29 2078 6415
Ֆաքս՝ +44 (0) 29 2078 6416
Էլ. փոստ՝ wales@amnesty.org.uk

**Բրիտանական Կարմիր Խաչի գրասենյակ ՄԹ-ում**
Լոնդոն EC2Y 9AL
Մուրֆիլդզ 44
(44 Moorfields
London EC2Y 9AL)
Հեռախոս՝ 0844 871 11 11
Ֆաքս՝ 020 7562 2000
Էլ. փոստ՝ information@redcross.org.uk
Ինտերնետային կայք՝ http://www.redcross.org.uk/

**Միգրանտների ռեսուրսային կենտրոն**
http://www.migrantsresourcecentre.org.uk/home.php
Աշխատում է ներգաղթածների և փախստականների հետ և այլ գործակալությունների հետ գործընկերությամբ՝ իրականացնելու սոցիալական արդարություն և փոփոխություններ՝ հնարավորություն տալով միգրանտների և փախստականների լիարժեք մասնակցելու հասարակության կյանքին:

**ՕՔՍՖԱՄ**
Ընդհանուր հարցումներ` 0870 333 2700
Արտասահմանից զանգահարելիս` +44 (0) 1865 473727
Ինտերնետային կայք` http://www.oxfam.org.uk/
Առաջարկում է սննդամթերք և ապաստան անհետաձգելի իրավիճակներում, ինչպես նաև օգնություն լեզվի դասընթացների, իրավաբանական և առողջապահական խորհրդատվության հարցերում:

## Այլ կազմակերպություններ/մարմիններ

**«Ազատություն» (The Liberty)**: Մարդու իրավունքների ուղեցույց http://www.yourrights.org.uk/index.shtml
Աշխատում է Անգլիայում և Ուելսում իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու և ընդլայնելու ուղղությամբ, մասնավորապես խոցելի խմբերի`միգրանտների, փախստականների, ապաստան հայցողների և այլոց համար:

**Ներգաղթի իրավաբանական գործունեությամբ զբաղվողների ընկերակցություն**
(**Immigration Law Practitioners' Association**)
http://www.ilpa.org.uk/
Նպաստում և բարելավում է ներգաղթածների խորհրդատվությունը և ներկայացվածությունը:

**Լոնդոնի խորհրդատվական ծառայությունների դաշինք**
(**London Advice Service Alliance**)
http://www.lasa.org.uk/
Նպաստում և բարելավում է ներգաղթածների խորհրդատվությունը և ներկայացվածությունը:

**Թեժ գծեր և օգնություն. Մարդկանց թրաֆիքինգ**
**Միացյալ Թագավորության մարդկանց թրաֆիքինգի կենտրոն**
Հեռախոս` + 44 (0) 114 252 3891
Էլ. փոստ` info@ukhtc.org
Ինտերնետային կայք` http://www.ukhtc.org/
Տրամադրում է պաշտպանության և աջակցություն տուժածներին:

**Ոստիկանապետերի ընկերակցություն**
Հեռախոս` 020 7084 8950
Ինտերնետային կայք` http://www.acpo.police.uk/

**Վերջ տվեք թրաֆիքինգին**
Հեռախոս` +44 (0) 207 921 4258
Էլ. փոստ` info@stopthetraffik.org
Web: http://www.stopthetraffik.org/language.aspx
Ամենից արագ աճող գլոբալ հանցագործության` մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ աշխատող գլոբալ շարժում:

## 12. Բրիտանական քաղաքացիության ձեռքբերում

Հպատակագրում

Գոյություն ունեն երեք ՄԹ-ում հպատակագրվելու երեք հիմնական ուղիներ.

Հպատակագրում

- ՄԹ քաղաքացու կամ ՄԹ-ում հաստատված անձի հետ (ովքեր անձնագրում ունեն մնալու անորոշ ժամանակով թույլտվության (ILR) կնիք) - ամուսնության հիման վրա` 3 տարի հետո,
- Հպատակագրում ՄԹ-ում աշխատանքի, բիզնեսի կամ ներդրումների հիման վրա` 6 տարի հետո,
- Հպատակագրում բնակության իրավունքի հիման վրա` 6 տարի հետո:

Պահանջները`

- Դուք 18 կամ ավելի տարեկան եք, և
- Առողջ մտքի տեր եք, և
- Մտադիր ենք շարունակել ապրել Միացյալ Թագավորությունում, կամ շարունակել ծառայությունը բրիտանական թագին, ծառայությունը որևէ միջազգային կազմակերպությունում, որին Միացյալ Թագավորությունը անդամակցում է, կամ ծառայությունը որևէ ընկերությունում կամ ընկերակցությունում, որը ստեղծվել է Միացյալ Թագավորությունում, և
- Կարող եք ընդունելի մակարդակով հաղորդակցվել անգլերեն, վալիերեն (ուելսերեն), կամ շոտլանդական գաելերեն լեզուներով, և
- Ունեք Միացյալ Թագավորությունում կյանքի բավարար իմացություն
- Դրական նկարագրի տեր եք, և

- Բավարարում եք բնակության (կացության) պահանջները (կացության պահանջվող ժամանակահատվածը):

http://www.ukba.homeoffice.gov.uk/britishcitizenship/
Հեռախոս՝ 0845 010 5200
Էլ. փոստ՝ nationalityenquiries@ind.homeoffice.gsi.gov.uk